

ԷՎԹԱՆԱԶԻԱ.

բարոյագիտական-աստվածաբանական տեսանկյուն

(քննարկման նյութեր)

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԼՈՐ ՍԵՂԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Դ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԼՈՐ ՄԵՂԱՆ
ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Էվթանազիա.
բարոյագիտական-աստվածաբանական
տեսանկյուն

(ք ն ն ա ր կ մ ա ն ն յ ու թ ե ր)

Սբ Էջմիածին 2013

**Սույն գրքույկը ներկայացնում է ԵՀԽ
Հայաստանյան Կլոր սեղան միջեկեղեցական
բարեգործական հիմնադրամի և Մայր Աթոռ
Սուրբ Էջմիածնի Տեղեկատվական համակարգի
«Երկխոսության սրահ» համատեղ ծրագրի
շրջանակներում կազմակերպված «Էվթանազիա.
բարոյագիտական-աստվածաբանական տեսանկյուն»
թեմայով քննարկման (25 հոկտեմբերի 2013 թ., Մբ
Էջմիածին) նյութերը:**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	5
Զեկույց Ա- Էվթանագիան հոգեբանական տեսանկյունից.....	8
Զեկույց Բ – Էվթանագիա. Բարոյագիտական- աստվածաբանական տեսանկյուն	21
Զեկույց Գ – Էվթանագիա	45
Ամփոփում.....	53
Հավելված Ա – Քրիստոնեական Եկեղեցիների դիրքորոշումը Էվթանագիայի վերաբերյալ	56
Հավելված Բ – ՀՀ Օրենքը Բնակչության բժկական օգնության և սպասարկման մասին.....	60

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

2013 թ. հոկտեմբերի 25-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում նախաձեռնությամբ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան Կլոր սեղան միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի և Մայր Աթոռի Տեղեկատվական համակարգի, «Երկխոսության սրահ» համատեղ ծրագրի շրջանակներում տեղի ունեցավ «Էվթանազիա. Բարոյագիտական-աստվածաբանական տեսանկյուն» թեմայով քննարկում:

Արդի աշխարհում գիտատեխնիկական, մասնավորապես կենսաբժշկական տեխնիկայի առաջընթացն ավելի սրեց Էֆթանազիայի խնդիրը՝ առաջնային պլան մղելով խնդրի նկատմամբ հստակ մոտեցումների ու դիրքորոշումների անհրաժեշտությունը: Էվթանազիայի օրինականացման հարցն այսօր ամբողջ աշխարհում լայնորեն քննարկվում է, և Էվթանազիայի խնդրի հրատապ լուծման պահանջը պայմանավորված է այն հանգամանքով, որ ամեն պահի հազարավոր մարդիկ հայտնվում են դժվարին երկրնտրանքների առջև. Երկրնտրանքներ, որոնք կապվում են մարդու համար ամենաթանկ արժեքի՝ կյանքի, ինչպես նաև մահվան հետ:

Այս տեսանկյունից խնդիրը լուրջ մոտեցումներ է պահանջում ոչ միայն բժշկական, իրավաբանական, հոգեբանական, այլև բարոյագիտական-աստվածաբանական տեսանկյուններից: Հայաստանը ներքաշված է խնդրի դեռևս կուլիսային քննարկմանը, սակայն զարգացող երկրներն անգամ չեն կարող խուսափել նման կենսական խնդիրների հետ բախումից: Մյուս

կողմից էլ այդ երկրների սոցիալ-տնտեսական խնդիրներն առավել խոչընդոտներ են հարուցում խնդրի համակողմանի քննարկման համար:

Քրիստոնեական Եկեղեցին միանգամայն ժխտողական կեցվածք ունի Էվթանազիայի խնդրի նկատմամբ՝ հավատարիմ մնալով մարդկային կյանքի՝ որպես անպայմանական ու գերագույն արժեքի նկատմամբ ունեցած քրիստոնեական դիրքորոշմանը: Մակայն մարդկային կյանքում չի նվազում երևույթի նկատմամբ հետաքրքրությունը, առկա խնդիրների լույսի ներքո հաճախ անբավարար են նկատվում տրվող պարզաբանումները:

Գրքույկում մեր ընթերցողի ուշադրությանն են ներկայացվում «Էվթանազիա. Բարոյագիտական-աստվածաբանական տեսանկյուն» թեմայով քննարկման գեկույցները և եզրահանգումները:

Վահրամ քահանա Մելիքյան

ԶԵԿՈՒՅՑ Ա

*Միհրդատ Մադաթյան
կլինիկական հոգեբան*

ԷՎԹԱՆԱԶԻԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Աշխարհում ապրում են բազմաթիվ մարդիկ, ովքեր տառապում են ամենատարբեր հիվանդություններով: Շատ հիվանդներ գտնվում են կյանքի և մահվան միջանկյալ վիճակում: Նման իրավիճակներում տառապում են ոչ միայն հիվանդները, այլև նրանց մտերիմներն ու հարազատները, և նույնիսկ այն հասարակությունը, որում նրանք ապրում են:

Մեր ժամանակներում, շնորհիվ գիտական նվաճումների, այդպիսի հիվանդների կյանքը հնարավոր է երկարաձգել: Այդպիսի դեպքերում անխուսափելիորեն ծագում են մի շարք բարոյական և իրավական խնդիրներ՝ կապված էվթանազիայի հետ: Մասնավորապես՝ իրականացվում է էվթանազիա, սակայն ունենալով թաքնված բնույթ, այն չի ստանում իրավական գնահատական:

«Էվթանազիա է անվանվում ցանկացած գործողություն, որն ուղղված է այս կամ այն անձի կյանքին վերջ տալուն՝ ընդառաջ գնալով վերջինիս սեփական կամքին, և կատարված ոչ շահագրգիռ մարդու կողմից»: Սա Հոլանդիայում ընդունված օրենսդրական ձևակերպում է:

Սակայն էվթանազիայի խնդիրն այսօր և հանկարծակի չի առաջացել: Մահվան թեմայի համատեքստում այն քննարկվում է դեռևս անտիկ ժամանակներից: Վիճահարույց այս խնդրին անդրադարձել են բազմաթիվ իրավաբաններ, փիլիսոփաներ, հոգեբաններ և մտածողներ:

Անգլիացի փիլիսոփա Ֆրենսիս Բեկոնը (1561-1626թթ.) թեթև և անցավ մահը բնութագրելու համար մտքրեց «էվթանազիա» տերմինը (հունարենից՝ eu - լավ, thanatos - մահ), այսինքն լավ, հանգիստ և թեթև մահ՝ առանց տանջանքների:

Հիպոկրատի ժամանակներից մինչ մեր օրերը բժշկական էթիկան իր մեջ ներառում է հետևյալ արգելքը. «Ես ոչ ոքի, անգամ այդ մասին խնդրողին, մահաբեր դեղ չեմ տա և նույնիսկ խորհուրդ չեմ տա»:

Սակայն վերջին ժամանակներում բժիշկներն ավելի ու ավելի հաճախ են դիմում այս պրակտիկային այն դեպքերում, երբ հիվանդն ինքն է խնդրում այդ մասին:

Ինչպե՞ս պետք է մոտենալ այս փաստին. որպես հնացած արգելքներից ձերբազատման, թե՞ որպես որոշակի ամենաթողության, որը միաժամանակ և՛ սխալ է բարոյականության տեսանկյունից, և՛ վտանգավոր իր պրակտիկայի մեջ:

Անցած հարյուրամյակի սկզբին իրավաբան Բինդինգը և հոգեբույժ Գոխենն առաջարկեցին էվթանազիա կոչել այսպես ասած «ոչ լիարժեք» կյանքերի ոչնչացումը: Էվթանազիայի այս զարհուրելի մեկնաբանությունը հետագայում լայն տարածում գտավ ֆաշիստական Գերմանիայում, որտեղ մահացնում էին «ոչ ճիշտ զարգացում ունեցող» նորածիններին, հոգեկան հիվանդներին, թոքախտով, չարորակ

նորագոյացություն ունեցող հիվանդներին և այլն: Ստեղծվել էր «մահվան» մի հատուկ ինդուստրիա գազախցիկների և կրեմատորիաների տեսքով:

Նյուրենբերգի Միջազգային զինվորական դատարանն այս գործողությունները որակեց որպէս մարդկության նկատմամբ կատարված հանցագործություն: Հետագայում արդէն այս մասին ընդունվեցին բազմաթիվ արգելող փաստաթղթեր: Դրանցից հայտնի է 1987 թվականի հոկտեմբերին, Մադրիդում (Իսպանիա), 39-րդ Համաշխարհային բժշկական ասամբլեայի ընդունած «Էվթանազիայի մասին դեկլարացիան»:

Դիտարկենք Էվթանազիայի խնդիրը՝ քննելով որոշակի ձևակերպումներ և մեկնաբանություններ:

Բառացիորեն «Էվթանազիան» թարգմանվում է որպէս «բարի մահացում»: Սակայն այս տերմինն իրականում նշանակում է ոչ թե ինքստինքյան «բարի» մահ, այլ «բարի» մահվան պատճառում: «Էվթանազիան» կարելի է ձևակերպել որպէս «այլ մարդու մահացում, մահացողի համար ենթադրյալ բարի նպատակով» մահացողի համաձայնությամբ (կամավոր Էվթանազիա) կամ առանց նրա համաձայնության, եւ նույնիսկ՝ նրա կամքին հակառակ (ոչ կամավոր կամ հարկադիր Էվթանազիա): «Մահացնել» բառն այստեղ հասկացվում է որպէս գործողություն, կամ գործողության թույլատրում, որն ուղղված է մարդուն կյանքից զրկելուն, անկախ այն փաստից, թե այդ ազդեցությունն ուղղակի է, թե՛ անուղղակի:

Պետք է ասել, որ «Էվթանազիա» տերմինն առանձնանում է ծայրահեղ հակասականությամբ, ինչն էլ բարդացնում է բառի մեկնաբանումը՝ առաջացնելով եզրաբանական խառնաշփոթ: Կախված տերմինի

սահմանումից՝ փոխվում է խնդրի նկատմամբ ունեցած մոտեցումը:

Տարբերակվում են պասիվ և ակտիվ էվթանագիաներ:

Պասիվ էվթանագիան (կամ ինչպես նաև անվանում են «մի կողմ դրված ներարկչի մեթոդը») տեղի է ունենում, երբ դադարեցվում է կյանքի երկարացմանն ուղղված բժշկական օգնությունը, ինչն արագացնում է բնական մահի մոտեցումը: Գործնականում այս մեթոդը հաճախ հանդիպում է Հայաստանում:

Սակայն հիմնականում, էվթանագիայի մասին խոսելիս, նկատի է առնվում ակտիվ էվթանագիան:

Ակտիվ էվթանագիա ասելով (նաև անվանում են «լցված ներարկչի մեթոդ») հասկանում են մարդուն ինչ-ինչ դեղորայքային կամ այլ միջոցների ներարկում, որը հանգեցնում է արագ և անցավ մահվան:

Ակտիվ էվթանագիան տեղի է ունենում տարբեր ձևերով, որոնցից են՝

1. «Սպանություն գթասրտությունից». բժիշկը, տեսնելով հիվանդի անհույս տանջանքները և այլևս չկարողանալով որևէ կերպ օգտակար լինել, նրան գերդոզավորված ցավազրկող է ներարկում, ինչի հետևանքով տեղի է ունենում ցանկալի մահացու ելք:

2. «Բժշկի կողմից աջակցվող ինքնասպանություն». բժիշկն օգնում է անբուժելի հիվանդին վերջ տալու իր կյանքին:

3. Ակտիվ ինքնաէվթանագիան տեղի է ունենում առանց բժշկի օգնության: Հիվանդը ինքն է միացնում կամ անջատում ինչ-որ մի սարք, որը հանգեցնում է նրա արագ և անցավ մահվանը, այսինքն՝ ինքնասպան է լինում:

Խնդիրը քննարկելով հոգեբանական տեսանկյունից՝ կարող ենք առանձնացնել ութ դրույթ՝

1. Տերմինալ հիվանդությունը կարող է հիվանդի համար ունենալ գերազույն իմաստ:

2. Էվթանազիայի մասին խնդրանքը կարող է օգնության խնդրանք լինել:

3. Գոյություն ունի հիվանդի կողմից բժշկի ինդուկցման վտանգ:

4. «Տանջանքները թեթևացնելու» ցանկությունը կարող է թաքնված էգոիզմի արտահայտում լինել:

5. «Թեթև մահի» իրողությունը բոլորովին էլ թեթև չէ:

6. Բժշկի համար էվթանազիայի իրականացումը անուղղելի սխալ է:

7. Բժշկական անձնակազմի համար գոյություն ունեն պատասխանատվության սահմաններ:

8. Էվթանազիայի օրինականացումը կխարխլի վստահությունը բժշկի գործունեության նկատմամբ:

Քննարկենք այս կետերն առանձին-առանձին:

1. Տերմինալ հիվանդությունը՝ գոյության նոր սահման

Տանջվող մարդու հիմնական խնդիրը տանջանքի իմաստը գտնելն է: Եթե այն գտնված է, ապա մարդը կամայական տանջանքի կարող է դիմանալ: Եթե ոչ, ապա նույնիսկ հարբուխը կարող է ինքնասպանության պատճառ դառնալ: Նույնիսկ նվազագույն հոգեկան կամ ֆիզիկական ցավը ապակողմնորոշում է մարդուն, և նա չի կարողանում հասկանալ, թե ինչ է կատարվում իր հետ:

Ասենք ավելին՝ տանջանքի իմաստի բացակայությունը կարող է ավելի մեծ տանջանք դառնալ մարդու

համար, քան հենց ինքը՝ հիվանդությունը: Ըստ Նիցշեի՝ մարդու համար «ոչ թե հենց տանջանքն է խնդիր, այլ իրեն տանջող հարցի պատասխանի բացակայությունը՝ ինչու՞ տանջվել: Տանջանքի անհիմաստությունը, այլ ոչ տանջանքը»:

Հայտնի հոգեբան Էլիզաբեթ Կյուբլեր-Ռոսսը, ուսումնասիրելով տերմինալ հիվանդներին, նրանց մոտ տարբերակել է հոգեկանի անցումային հինգ փուլ՝

1. Ժխտման փուլ. իմանալով իր ախտորոշման և կանխորոշ ապագայի մասին, մարդն ասում է՝ ոչ, սա ես չեմ:

2. Բողոք՝ ինչու՞ ես:

3. Հետաձգելու խնդրանք՝ հիմա չէ, մի փոքր ավելի ուշ:

4. Դեպրեսիա՝ այո, ես մահանում եմ:

5. Անսպասելի ընդունման փուլ՝ թող լինի:

Առաջին չորս փուլերի տրամաբանությունը հասկանալի է: Սակայն ինչու՞ է տեղի ունենում անցում դեպրեսիայից դեպի ընդունում: Այս հարցին պատասխանելու համար պետք է հասկանալ, թե ինչու է հիվանդը, իմանալով իր մահացու ախտորոշման մասին, ընկնում դեպրեսիայի մեջ:

Հաճախ մարդն ապրում է ապագայի համար ստեղծած իր պրոյեկցիայում՝ որոշակի էքսպանսիայի հեռանկարով լայնացնելով այս աշխարհում իր գոյության իմաստը: Նա պլանավորում է բնակարան գնել, ամառանոց կառուցել, երեխաներ մեծացնել, թոռներ խնամել և այլն: Հենց սա էլ նրա էներգիայի, նրա կյանքի ողջ ուժերի կիրառման կետն է: Մահացու հիվանդության լուրը զրկում է նրան իր ապագայից: Առաջանում է մի իրավիճակ, երբ դեռ մարդն ունի որոշ

ուժեր, սակայն կիրառելու տեղ չկա: Ապագայի տեղում դատարկություն է՝ իմաստի վակուում: Հենց այս պատճառով էլ մարդն հայտնվում է դեպրեսիայի մեջ:

Սակայն ամենահետաքրքիրը տեղի է ունենում հետո: Մահվան սպասումը մարդուն կտրում է ունայնության պտույտից: Եվ նա սկսում է նկատել բաներ, որոնց վրա նախկինում ուշադրություն չէր դարձրել, միզուցե նույնիսկ գիտակցաբար անտեսել էր: Առաջին հերթին դրանք միջանձնային հարաբերություններն են:

Այսպիսով՝ մահվանը նախորդող ժամանակաշրջանը ոչ թե աղքատացնում, այլ հակառակը՝ հարստացնում է մարդուն՝ նրա առաջ բացելով գոյության նոր սահմաններ, լցնելով նրա կյանքը բարձրագույն իմաստով: Այստեղից էլ հասկանալի է դառնում, թե ինչու տերմինալ հիվանդներն իրենց մահվանը նախորդող մի շրջան համարում են իրենց կյանքի լավագույն շրջանը:

Ինչ՞ է խնդրում հիվանդը, երբ ասում է՝ սպանիր ինձ:

Երբ հիվանդն ասում է՝ սպանիր ինձ, նա խնդրում է՝ օգնիր ինձ: Նա փորձում է իր ձայնը հասցնել շրջապատի մարդկանց, սակայն հաճախ նրա օգնության ճիշդ մնում է անպատասխան: Ինչո՞վ է սա պայմանավորված: Առաջին հերթին հիվանդն ուզում է, որ իր մեջ տեսնեն մարդու, այլ ոչ այն, ինչ տեսել են նախկինում, երբ նա առողջ էր: Հիվանդի հոգեկան անհարմարավետության մյուս պատճառը իր հանդեպ նկատվող բժիշկների և շրջապատի կեղծ վերաբերմունքն է: Նրան անընդհատ հուսադրում են, սակայն հիվանդը գիտակցում է իրականությունը և չի կարողանում որեւէ մեկի հետ խոսել իր ապրումների մասին:

Այս իրավիճակում հիվանդին անհրաժեշտ է հոգեթերապևտիկ օգնություն ցուցաբերել:

Հիվանդի դեպրեսիվ ինքնագնահատականը կարող է ինդուկցել բժշկին բուժման անհուսություն:

Էվթանազիայի դեմ այս փաստարկը բերել է հայտնի հոգեբույժ պրոֆեսոր Վ. Ֆ. Կոնդրատևը: Նա գրում է. «Կրիտիկական վիճակներում գտնված հիվանդների մոտ կարող են առաջանալ մարմնածին և հոգեծին դեպրեսիաներ: Ցանկացած դեպրեսիա արտահայտվում է սուբյեկտիվ նիհիլիստական կանխատեսումներով: Բարենպաստ էլքի հանդեպ հիվանդի հավատի բացակայությունն ինքնին կարող է պատճառ հանդիսանալ մահվան ճանապարհով շուտափույթ տանջանքների վերջ տալու խնդրանքների համար: Դեպրեսիայի մեջ գտնվող հիվանդի նման գնահատականը գործնականում միշտ չէ, որ համապատասխանում է իրական կանխատեսումներին և կարող է ունենալ երկու բացասական հետևանք: Առաջին՝ դեպրեսիան ինքնին վատացնում է հիվանդի վիճակը և երկրորդ՝ հիվանդի դեպրեսիվ ինքնագնահատականը կարող է ինդուկցել բժշկին, որ բուժումն անհնար է: Նման դեպրեսիան դարձելի է, և հետևաբար կարելի է փոխել հիվանդի մոտեցումը կյանքի պահպանման գործընթացի նկատմամբ հոգեթերապիայի և հոգեֆարմակոթերապիայի միջոցով, որի արդյունքում նա կհրաժարվի էվթանազիայի մտքից: Ի վերջո կյանքի սահմանին գտնվող մարդու հոգեբանական վիճակներն այնքան էլ լավ չեն ուսումնասիրված, և իրականում անհնար է կանխատեսել, թե էվթանազիայի իրականացման հենց առաջին, սակայն արդեն սկսված փուլում, հիվանդը չի

հրաժարվի իր այդ որոշումից, կամենալով շարունակել իր կյանքը տանջանքներով»:

«Հիվանդի տանջանքները» թեթևացնելու ցանկության տակ կարող է թաքնված լինել շրջապատի էգոիզմի արտահայտումը:

Էվթանազիայի դեմ եղած այս փաստարկը հիմնված է էվթանազիայի կողմնակիցների հավանական մոտիվացիայի հնարավոր վերլուծության վրա: Ծանր հիվանդի մահն արագացնելու անհրաժեշտության մասին ասված կարեկցանքի և գթասրտության խոսքերը չեն թաքցնում արդյոք նրա հետ ապրել չցանկանալու, նրա հոգեկան ցավը չկիսելու, նրան օգնելու համար իրենց ժամանակն ու ուժերը չծախսելու էգոիստական ցանկություններ: Ցավոք, մարդիկ իրենք էլ հաճախ չեն ուզում հասկանալ, թե ինչ է թաքնված իրենց սեփական հումանիզմի քողի տակ:

Թեթև է արդյո՞ք «թեթև մահը»: (վիրտուալ աշխարհներ և իրականություն)

Էվթանազիայի դեմ այս փաստարկն այն դեպքերի համար է, երբ էվթանազիայի մասին հիվանդի խնդրանքն ընդունվել է շրջապատում:

Խնդիրն այն է, որ զանգվածային գիտակցության մեջ էվթանազիան պատկերվում է այնպես, ինչպես թելադրել են լրատվամիջոցները: Մակայն իրականությունն այնքան էլ այդպիսին չէ: Չնայած էվթանազիայի մասին բազմաթիվ հեռուստահաղորդումներում մահացողի ուրվագիծն ընկղմվում է սպիտակ լույսի մեջ, սակայն ինքնասպանության իրողությունն այնքան էլ անամպ չէ:

Այստեղ հնարավոր է երկու սցենար:

Լավագույն դեպքում մարդու մեջ մահացու դեղի չափաբաժինը ստանալուց հետո արթնանում է կյանքի բնագոր: Նա հասկանում է շրջապատին իր խոսքը հասցնելու ջանքերի ապարդյունությունը, դադարում է նրանց հետ խաղալ այդ խաղը և շարունակում է ապրել: Սակայն միևնույն ժամանակ հասկանում է, որ դեղորայքն արդեն ներարկված է, և հետդարձի ճանապարհ չկա: Այսպիսով՝ հիվանդը մահանում է հոգեվարքի մեջ: Նա ուզում է ապրել, սակայն մահանում է՝ հենց ինքն էլ դառնալով իր մահվան պատճառը:

Վատագույն դեպքում դեպրեսիան ամբողջովին կլանում է նրա կամքը կյանքի նկատմամբ: Այս դեպքում մարդը մահանում է ծայրահեղ հուսահատության մեջ: Եթե նույնիսկ ենթադրենք, որ մահը վերջ է տալիս մարդու անձնային գոյությանը, ապա կյանքի նման վերջը նույնպես թեթև անվանել չի կարելի: Իսկ եթե ընդունենք, որ մահը կյանքի մի փուլ է, և մարմնի մահից հետո գիտակցությունը պահպանվում է, ապա այս եզրագծից այն կողմ նման մարդու հոգում կմնա հավերժ մենություն: Այդպիսի անցումը դեպի հավերժություն երբևէ չի կարող լինել «թեթև մահ»: Հակառակը՝ մարդը հեռանում է այս աշխարհից սարսափի և հակակրանքի դիմակը դեմքին:

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ ցանկացած դեպքում էվթանազիան չի հանդիսանում իբրև թեթև մահ:

Ինչու՞ պետք է տանջվեն բժիշկները: (անդառնալի սխալ)

Էվթանագիայի դեմ եղած այս փաստարկը վերլուծում է այն իրավիճակը, որում կարող է հայտնվել Էվթանագիա իրականացրած բժիշկը: Ինչպես տեսնում ենք XX դարի էկզիստենցիալ փիլիսոփաների աշխատություններից, գոյությունը բնորոշվում է յուրահատուկ բարոյական անսխալականությամբ: Որքան էլ մարդը չաղավաղի իր բնությունը, նրան չի հաջողվի խուսափել ինքն իրենից: Այդ իմաստով անիմաստ է տեղափոխել սեփական բարոյական պատասխանատվությունը շրջակա միջավայրի վրա: Համենայն դեպս, կյանքի որոշակի պահերի, մարդը գիտակցում է, որ իր կատարած ինչ-որ մի անազնվության արդարացումը «ստեղծված իրավիճակով», հանգստություն չի բերում: Նա իրավունք չունի իրեն արդարացնել «հանգամանքներով», քանի որ վերջին հաշվով որոշումը կայացրել է իր ներքին «այո»-ն, առանց որի ոչ մի «արարք» չի կատարվում:

Բժշկական հանրության համար, Էվթանագիայի խնդիրն անբարո արարքի հետևանքների խնդիր է: Դա այն արարքն է, որի ժամանակ բոլոր հումանիստական և ուտիլիտար հիպոթեզները հատվում են մարդու բարոյական գոյության իրականության հետ: Այդ հատումը կարող է բժշկի համար դառնալ կյանքի ողբերգություն:

Հիշենք Ֆեոդոր Միխայլովիչ Դոստոևսկու հերոսի՝ Ռասկոլնիկովի, կատարած սպանությունը, որն ուներ բացառապես բարի նպատակ՝ երջանկացնել ողջ մարդկությանը: Սակայն այդ արարքից հետո նրա մեջ ինչ-որ բան է կտրվում և հետզհետե նա հասկանում է ասելով. «Ես պառավին չսպանեցի, ես ինձ սպանեցի»:

Վեպի իմաստն այն է, որ իր արարքի արժանի պատիժը Ռասկոլնիկովը կրում է հենց իր մեջ: Այս նույն բանը տեղի է ունենում մահացող ծեր կնոջը էվթանազիայի ենթարկած բժշկի հետ, ով նախքան այդ արարքը կարծում է, որ իր պարտքն է այս կերպով թեթևացնել հիվանդի տանջանքները, իսկ հետո, գիտակցելով իր արարքը, տարիներ շարունակ տանջվում է, իր մեջ կրելով իր կատարած հանցանքի պատիժը, այն արարքի, որն այլևս փոխել հնարավոր չէ:

Որոշ բաներ անդառնալի են: Խախտելով «Մի սպանիր» պատվիրանը՝ բժիշկը ոչ միայն հրաժարվում է իր կոչումից, նա մի ինչ-որ գլխավոր տեղում դադարում է «Մարդ» լինել: Այսինքն՝ երբ խոսում ենք էվթանազիային դեմ, մենք հոգ ենք տանում բժիշկների մասին:

Բժշկական հանրության պատասխանատվության սահմանները:

Այս փաստարկը պաշտպանում է բժշկի բարոյական արժանապատվությունը: Եթե անգամ ենթադրելու լինենք, որ հիվանդը վճռականորեն է տրամադրված ինքնասպանությանը և պահանջում է «սպասարկել» իրեն, դա չի նշանակում, որ բժիշկը պարտավոր է ի կատար ածել այդ ցանկությունը: Գոյություն ունեն հիվանդի առջև բժշկի պատասխանատվության սահմաններ: Եթե թմրամոլ հիվանդը բժշկից թմրանյութ պահանջի, արդյո՞ք բժիշկը պետք է ի կատար ածի նրա պահանջը, կամ էլ օգնի նրան, երբ կոչված է ձերբազատել նրան այդ կախվածությունից: Իսկ, եթե այդ նույն հիվանդը հրաժարվի բուժումից և սկսի շանտաժի ենթարկել բժշկին իր ինքնասպանությամբ...

Մարդն ազատ է իր որոշումների և լուծումների մեջ: Բժիշկը պետք է կարողանա մերժել հիվանդի այն ցանկությունները, որոնք հակասում են իրավական և բարոյական նորմերին:

Էվթանազիայի օրինականացումը կխարխլի վստահությունը բժշկի գործունեության նկատմամբ:

Էվթանազիայի օրինականացումը կբերի նրան, որ հիվանդները կսկսեն կասկածել բժշկի ախտորոշման օբյեկտիվությանը, քանզի այս դեպքում բժշկի գործողությունների հետևում կարող են թաքնված լինել շահադիտական և հանցավոր նպատակներ: Դա էլ հենց կխարխլի վստահությունը ողջ բժշկական հանրության գործունեության նկատմամբ:

ԶԵԿՈՒՅՑ Բ

*Ժորա սարկավագ Սարգսյան
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան*

ԷՎԹԱՆԱԶԻԱ. ԲԱՐՈՅԱԳԻՏԱԿԱՆ- ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆ

Նախաբան

Ժամանակակից մարդը հավատում է տեխնիկայի գործողությանը և երբեմն թվում է, թե դա միակ բանն է, որին նա հավատում է: Այն մարդու հանճարի, բանականության, հնարագիտության արդյունքն է: Բայց գիտատեխնիկական վիթխարի հաջողությունները ոչ միայն չեն լուծում մարդկությանը հուզող խնդիրները, այլ ինչ-որ չափով հրահրում են ճգնաժամերի խորացում: Եվ այս ամենի ամենակարևոր պատճառներից մեկը հոգևոր առաջընթացի բացակայությունն է:

Գիտության առաջընթացը, իհարկե, ունի նաև իր դրական կողմերը, սակայն դրա ոչ խելացի օգտագործումն ավելի շուտ կարող է կործանել մարդուն, քան փրկել նրա գոյությանը սպառնացող վտանգներից: Անհրաժեշտ է վերահսկել տեխնոլոգիայի առաջընթացը՝ պահելով այն բարոյականության սահմաններում:

Նոր տեխնոլոգիաները ոչ միայն հարմարավետություններ և միջոցներ են ստեղծում մարդու համար, այլև ոչ պակաս կարևոր խնդիրներ են հարուցում: Այսպիսի խնդիրներն առկա են հատկապես բիոթեխնոլոգիային, մասնավորապես, էվթանազիային

առնչվող հարցերում, որոնք առաջին պլան են մղում էթիկական հիմնահարցեր: Օրինակ, ներկայումս կենսաբժշկական նորահայտ սարքավորումները հնարավորություն են ստեղծում երկարաձգելու մարդու մահը՝ երկարաձգելով նաև նրա տառապանքները: Նման իրավիճակներում ավելի են սրվում հետևյալ հարցերը. մարդը կարո՞ղ է անել այն, ինչն իրեն լավ կամ հաճելի է թվում, բարոյական կարելի՞ է համարել նրա այդ ցանկությունը, եթե այն չի սահմանափակում ուրիշների ազատությունը, մարդն իրավունք ունի՞ ընտրելու իր մահվան ձևն ու ժամանակը և նման հանգամանքերում ինչպիսի՞ն է բարոյական պատասխանատվություն կրելու հարցը և, ի վերջո, ինչպե՞ս ապահովել մարդու ազատ ընտրությունը՝ միաժամանակ պահպանելով այդ ընտրության բարոյական ուղղությունը:

Բարոյագիտական-աստվածաբանական տեսանկյունից էվթանազիայի խնդրի նկատմամբ դիրքորոշումը մեծապես պայմանավորված է ինքնասպանության (կամավոր էվթանազիա) մեղքի, մարդու ազատ կամքի և տառապանքների իմաստի խորքային ընկալումներից:

Ինքնասպանություն կամ կամավոր էվթանազիա

Մինչ ինքնասպանության խնդրին անդրադառնալը նշենք, որ քրիստոնեության պատմության մեջ բազմաթիվ նահատակներ են եղել, ովքեր իրենց անձը զոհել են Աստծո անվան համար: Նրանց արյամբ է, որ հավատքն ավելի է զորացել և դարձի բերել շատ անհավատների: Աստծո խոսքին լիակատար վստահումով և Աստծուն

նվիրվածության պայմանով է տրվում ինքնագոհաբերման շնորհիւ: Մեսիական տոհմի հիմնադիր Դավիթն Աստծո բարկությունն իր վրա վերցրեց՝ աղերսելով Տիրոջը. «...Ահավասիկ ես. ես եմ մեղավոր, ես՝ հովիվս եմ հանցավոր, այս ոչխարներն ի՞նչ են արել: Թող քո ձեռքը բարձրանա իմ ու իմ հոր տան վրա» (Բ Թագ. ԻԴ 17):

Կյանքը յուրայինների համար տալը սիրո ամենամեծ դրսևորումն է: Մրա մեծագույն օրինակը տվեց Հիսուս Քրիստոս՝ «Ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար» (Հովհ ԺԵ 13): Հետևաբար՝ հանուն սիրո կյանքը զոհաբերելն ու ինքնասպանությունը միանգամայն հակադիր երևույթներ են. առաջինը՝ աստվածահաճո, երկրորդն՝ աստվածամերժ:

Սպանությունը մեծ մեղք է համարվում Աստվածաշնչում: Ծննդոցի Թ 6 համարն ուղղակի հրահանգում է. «Ով թափի մարդու արյունը, նրա արյան փոխարեն թող թափվի իր արյունը, որովհետև Աստծու պատկերով եմ ստեղծել ես մարդուն»:

Տասնաբանիայի վեցերորդ պատվիրանն ասում է. «Մի՛ սպանիր» (Ելք Ի 13, Բ Օրենք Ե 17):

Ս. Գրքում առկա են ինքնասպանությունների մի քանի դեպքեր, սակայն մասնավորապես Հին Կտակարանում դրանց ընկալումները միատարր չեն¹: Փորձենք

¹ Սուրբ Գրքում նկարագրված են ինքնասպանությունների հետևյալ դեպքերը.

- Սավուղի ինքնասպանություն (Ս. Թագ. ԼԱ 3-5)
- Աքիտոփելի ինքնասպանություն (Բ Թագ. ԺԷ 15-23)
- Զամբրիի ինքնասպանություն (Գ Թագ. ԺԶ 15-19)
- Ռաբսի ինքնասպանություն (Բ Մակ. ԺԴ 37-46)
- Հուդայի ինքնասպանություն (Մատթ. ԻԷ 5):

ինքնասպանության մեղքը դիտարկել Աստվածաշնչում
ինքնասպանության ամենահայտնի փաստի՝ Հուդայի
ինքնասպանության լույսի ներքո:

Հուդայի ինքնասպանության խնդիրը միշտ էլ եղել է
աստվածաբանների ուշադրության կենտրոնում:
Ուսումնասիրողները բազմաթիվ կարծիքներ են
արտահայտել Հուդայի ինքնասպանության
պատճառների վերաբերյալ: Բայց դրանք ընդամենը
կարծիքներ են, քանզի դժվար է թափանցել Հուդայի
ներքին աշխարհը, զգալ և ներկայացնել նրա
ապրումները: Այդ մանրամասնություններին չանդա-
դառնալով՝ հայացք ուղղենք Հուդայի ինքնասպա-
նության մեղքին, որն ընդհանրություններ ունի մեր
թեմայի հետ:

Ջերծ մնալով մանրամասն քննությունից՝ անցողակի կերպով նշենք, որ
հինկտակարանյան ինքնասպանությունները կատարվել են հարկադրա-
բար: Բայց այս իրողությունը կարող է արդյոք մեղմացուցիչ և ներելի
հանգամանք լինել ինքնասպանության արարքն արդարացնելու համար:
Նոր Կտակարանի լույսի ներքո պատասխանը միանշանակ բացասական
է: Հին Կտակարանում Սավուդի, Աքիտոփելի և Զամբրիի ինքնասպա-
նությունները կարելի է համարել իրենց՝ մինչ այդ ունեցած
դատապարտելի ընթացքի հետևանք, ովքեր դիմեցին այդ քայլին՝ կրկին
ըմբոստանալով Աստծո դեմ: Բայց Ռաբսն արդար մարդ էր, և նրան
եբրայեցիների հայր էին անվանում, հետևաբար չի կարելի նույն
փաստարկը բերել նրա ինքնասպանության պարագային: Ռաբսն իր հոգու
ազնվությունը պահելու համար դիմեց այդ քայլին: Այնուամենայնիվ,
այնպիսի խոշոր մտածող, ինչպիսին Ս. Օգոստինոսն է, իր «Աստծո
քաղաքի մասին» գործում, անդրադառնալով Ռաբսի ինքնասպանությանը,
նրա արարքը համարում է վեհ, բայց ոչ բարի: Իսկ ինչ վերաբերում է
Սամսոնի արարքին, ապա այն ինքնասպանություն չի կարելի համարել,
քանի որ Սուրբ գրքում Սամսոնի մահվան դրվագում էլ այն միտումը կա,
որ դա նաև Աստծո կամքն էր. նա տունը կարողանում է ավերել այն
բանից հետո, երբ Աստծուց ուժ է խնդրում. «Սամփոսոնն աղաղակեց Տիրոջը
և ասաց. «Տե՛ր, գորությունների՛ Տե՛ր, հիշի՛ր ինձ և գորացրո՛ւ ինձ այս մի
անգամ էլ, Աստվա՛ծ, որ իմ երկու աչքերի համար վրեժս լուծեմ այս
այլազգիներից» (Դատ. ԺԶ 28):

Գուցե վիճելի է, բայց հնարավոր է այնպիսի մի ենթադրություն, ըստ որի՝ Ադամի մեղքը ոչ այնքան արգելված ծառից ուտելն էր, որքան՝ ինչ արեց նա հետագայում: Աստծո «հարցաքննությունն» ուղղված էր երկու մարդ արարածներին, բայց Տերն իրողությունը պարզելու նպատակ չէր հետապնդում: «Ի՞նչ արեցիր» հարցն Աստծո շուրթերում անիմաստ է, եթե ասվում է տեղի ունեցածը պարզելու համար: Մարդկանց մտքերը կարդացող Աստված անշուշտ գիտեր կատարվածը: Հարցի էությունն այն է, որ դրանով միգուցե Աստված մեղքերը քավելու հնարավորություն տվեց Ադամին. եթե նա խոստովաներ իր մեղքը և դրանով իսկ իր վրավերցներ ողջ պատասխանատվությունը, ապա այդ արարքը սիրով թելադրված ինքնագոհաբերում կլիներ: Այդ դեպքում Ադամը, իմանալով հանդերձ, որ իրեն մահ է սպասվում, կվերականգներ մարդու մեջ Աստծո պատկերը և չէր դատապարտվի տանջանքների և մահվան. չէ՞ որ Եվային փրկելը կնշանակեր կյանք փրկել («Եվա» նշանակում է «կյանք»): Բայց Ադամն իր անձը հարվածի տակ չդնելու համար ասաց. «Այս կինը, որ տվեցիր ինձ, նա՛ տվեց ինձ ծառի պտղից, և ես կերա» (Ծննդ. Գ 12):

Ահա այստեղ էլ Ս. Գրքում հանդիպում ենք մատնության առաջին դեպքին: Թեև այդպես էր եղել, ինչպես որ ասաց Ադամը, բայց միևնույն է՝ նրա արածը մատնություն էր: Տերը հարցնում էր Ադամին իր արածի մասին, մղում էր նրան զղջման, ոչ թե մատնության: Հուդան էլ Քրիստոսի՝ Գեթսեմանիի պարտեզում գտնվելու մասին սուտ չէր ասել Կայիափայի գործակալներին, բայց նրա «ճշմարտությունը» մատնություն էր: Այստեղ ընդհանրություն կարելի է տեսնել Աստծո

Աղամին ուղղած հարցի և Քրիստոսի՝ Գեթսեմանիի պարտեզում ձերբակալության պահին Հուդային ուղղած հարցերի միջև՝ «Հուդա՛, համբուրելո՞վ ես մատնում մարդու Որդուն» (Ղուկ. ԻԲ 48): Երկու դեպքերում էլ հավանաբար նրանց հնարավորություն էր տրվում ուղղելու իրենց սխալները, սակայն նրանք շարունակություն տվեցին իրենց արդեն գործած մեղքերին²:

Գեթսեմանիի պարտեզում ձերբակալության պահին Հուդային ուղղված հարցը նպատակ չունեք պարզելու ճշմարտությունը: Հիսուս ամեն ինչ գիտեր: Այդ հարցը մի վերջին հնարավորություն էր՝ ուղղելու մատնության մեղքը: Սա նշանակում է, որ մատնության մեղքն ինքնին աններելի չէր: Սովորաբար զոջմանը հաջորդում է ապաշխարությունը, բայց Հուդայի պարագային դրան փոխարինելու եկավ հուսահատությունը: Նա չհավատաց աստվածթողության հնարավորությանը, որի պատճառով էլ դիմեց ինքնասպանության: Մինչդեռ այդ նույն հավատքը փրկեց ուրացած Պետրոսին: Այսպիսով՝ Հուդայի մեղքի աններելիությունը պետք է տեսնել ոչ թե սոսկ մատնության, այլև ինքնասպանության մեջ:

Աստվածհայեցողության աններելիության մասին Քրիստոս ասաց. «Դրա համար ասում եմ ձեզ. ամեն մեղք և հայեցանք կներվեն մարդկանց, բայց Հոգու դեմ հայեցանքը չպիտի ներվի: Եվ ով որ մարդու Որդու դեմ խոսք ասի, նրան պիտի ներվի, բայց ով ասի Սուրբ Հոգու դեմ, նրան չպիտի ներվի ո՛չ այս աշխարհում և ո՛չ էլ հանդերձյալում» (Մատթ. ԺԲ 31-32):

Մատթևոսի Ավետարանում նշված մտքի այսպիսի ձևակերպումը նշանակում է, որ ներվում է ըմբոստա-

² **Ռաֆայել Պապայան**, Արդի Իրավունքի Քրիստոնեական ակունքները, Մք. Էջմիածին, 2002, էջ 74-75 (հետայսու՝ **Ռաֆայել Պապայան**):

ցումը միայն մարդու նկատմամբ, անգամ եթե նա մարդեղացած Աստված է, բայց մեղանչողը դեռ չի ճանաչել նրան որպես Տեր և Փրկիչ: Բայց այդ դեպքում ինչու՞ է Հիսուս շեշտում Սուրբ Հոգուն ուղղված հայհոյության աններելիությունը և ոչ թե պարզապես Հայր Աստծո կամ Որդի Աստծո: Այստեղ կա հետաքրքրական և կարևոր մեկնաբանություն, որը բացահայտում է ինքնասպանության աններելիության ամբողջ էությունը. Ավետարանի Սուրբ Հոգին Հին Կտակարանի Աստծո Հոգին է, որն արարչությունից առաջ շրջում էր ջրերի վրա (հմմտ. Ծննդ. Ա 2): Հենց նա էլ դարձավ մարդու կյանքի աղբյուրը. Աստված մարդ ստեղծելիս «նրա դեմքին կենդանության շունչ փչեց, և մարդը եղավ կենդանի էակ» (Ծննդ. Բ 7): Նույնն է հաստատում նաև Ավետարանը. «Հոգին է կենդանարար, մարմինը ոչ մի բան չի կարող անել...» (Հովհ. Զ 64): Մարդու հոգին աստվածային է, հետևաբար մարդն իշխանություն չունի նրա վրա, քանզի Աստված այդ իշխանությունը չի տվել: Ուրեմն աններելի մեղք է համարվում հայհոյությունն ուղղված մասնավորապես Ս. Երրորդության այն Անձի դեմ, Ով արարչության ժամանակ կենդանություն պարզևեց մարդուն, իսկ դա Սուրբ Հոգին է: Սուրբ Հոգուն ուղղված հայհոյությունն Ավետարաններում համարվում է մահվան ընտրություն: Եթե հայհոյությունն Աստծո՝ Ս. Հոգու դեմ նույնն է, ինչ մահվան ինքնակամ ընտրությունը, ապա, անշուշտ, իրական է նաև հակառակ կապը. ինքնասպանությունը, մահվան ինքնակամ ընտրություն լինելով, դառնում է հայհոյություն կյանք պարզևողի՝ Ս. Հոգու դեմ: Սրանով է բացատրվում, թե ինչու, ըստ Ավետարանի, ներելի են բոլոր մեղքերը, բացի ինքնասպանության մեղքից: Այն

ամենասարսափելի մեղքն է Աստծո դեմ, Ս. Հոգու դեմ ուղղված հայհոյանք՝ ծանր, անչափելի ու աններելի³:

Բարոյագիտության իդեալիստական ուղղություններից մեկը՝ հեղոնիզմը, դավանում է, որ հաճույքը կյանքի ամենամեծ բարիքն է, գերագույն նպատակը⁴: Իսկապես, եթե գոյություն չունի հավիտենական կյանք, ապա կյանքի գերագույն նպատակը հաճույքներն են:

Սակայն քրիստոնեական պատկերացմամբ կյանքի իմաստն այս աշխարհի հետ չի կապված:

Մարդու հոգու անմահությունը հաստատում է հավիտենական կյանքի գոյությունը: Այս մոտեցմամբ մարդու կյանքը ժամանակավոր աշխարհով չի սահմանափակվում, և նրա կյանքի նպատակը դառնում է հոգու փրկությունը, այն հավիտանական կյանքին արժանի դարձնելը: Իսկ ինքնասպանությունը դառնում է անգիտակից արարք, որը ժխտում է Աստծո գոյությունն ու հավիտենական կյանքի իրականությունը: Ն. Բերդյանն ասում է, որ այն, լինելով աստվածային և մարդկային օրենքների խախտում, առաջացնում է սարսափելի, համարյա գերբնական զգացողություն՝ հանդիսանալով բռնություն ոչ միայն կյանքի, այլև մահվան նկատմամբ: Բարոյալքման և ինքնասպանության հակումի դեմ պայքարը նախևառաջ պայքար է հանուն կյանքի հոգևոր իմաստի, որը չի կարող կախման մեջ լինել արտաքին ազդեցություններից⁵:

³ Տե՛ս **Ռաֆայել Պապայան**, էջ 71:

⁴ Տե՛ս **Фромм Э.**, Бегство от свободы, Минск, 2000, էջ 389:

⁵ Վազգենյան դպրանոց, հոգևոր-մշակութային պարբերական, 2008, # 2, (**Գևորգ Արդ. Սարոյան**, Էվթանազիա և բժշկական էթիկա, էջ 28, հետայսու՝ Էվթանազիա և բժշկական էթիկա):

Յուրաքանչյուր մարդու կյանք երկրի վրա ընթանում է Աստծո նախախնամությամբ. արարածն իրավունք չունի միջամտելու Արարչի գործերին և դադարեցնելու մի կյանք, որի գործարկումը միայն Ամենաբարձրյալին է վերապահված: Չնայած բոլոր մարդիկ բնական ծնունդով ծնողներից են առաջանում, սակայն, այնուամենայնիվ, Աստված է յուրաքանչյուր մարդու արարիչը, հոգի ու կենդանություն պարգևողը: Մահկանացու մարդը չի կարող ծնել անմահ հոգի. այն աստվածային է: Ուղղափառ և Կաթոլիկ եկեղեցիների աստվածաբանության մեջ ասվում է, որ եթե հոգին առաջանար սաղմից, որից և առաջանում է մարմինը, ապա նրանք միասին էլ կմեռնեին⁶:

Տերն օրհնության գործությամբ արարման պահին ասաց. «Աճեցե՛ք, բազմացե՛ք, լցրե՛ք երկիրը» (Մննդ. Ա 28): Այս խոսքն ուժի մեջ է մինչև հավիտյանների կատարումը: Հետևաբար, մարդն ամեն գնով պետք է փայփայի Աստծո՝ մարդուն տված գերագույն պարգևը՝ կյանքը՝ անսալով աստվածաշնչյան պատգամին. «Ձեր կյանքի մոլորությամբ ձեզ մահ մի՛ ցանկացեք և մի՛ սպանեք ձեր անձերը՝ ձեր իսկ ձեռքերի գործերով» (Իմս. Մողմունի Ա 12):

Կամքի ազատության կրոնաբարոյական կողմը

Ազատությունը մարդու բարոյականության դրսևորման և բարոյական արժեքների ու գործողությունների արտահայտման միջոց է:

Առաջին իսկ օրենքում Աստված արգելք է դնում Ադամի վրա. «Բայց բարու և չարի գիտության ծառից մի՛

⁶ Տե՛ս **Кант**, Метафизические начала естествознания, М., 1992, էջ 1289:

կերեք» (Ծննդ. Բ 17): Դրախտի արգելքը նպատակ չուներ սահմանափակելու մարդու ազատությունը, այլ միջոց և հնարավորություն էր՝ դրա ճիշտ օգտագործմամբ հասնելու կատարյալ վիճակի. չէ՞ որ մարդը կատարյալ չէր ստեղծվել, այլ իր ազատ ընտրությամբ կատարյալին հասնելու կարողությամբ: Հենց այս ընտրության հնարավորությունն է, որ բացահայտում է մարդու ազատ կամքի իրավունքը: Աստված սահմանափակեց մարդու բացարձակ ազատությունը՝ դրա փոխարեն նրան պարզնելով իմաստավորված ազատություն: Արարիչն իհարկե կարող էր ստեղծել այնպիսի մի էակ, որը ծրագրված լիներ բացարձակապես ու անշեղորեն բարին գործելու և մեղքից հեռու մնալու, սակայն դրանով արարչությունն աննպատակ կլիներ: Նման էակն արժեք չէր ունենա այն իմաստով, որ Աստծո համար արժեքավոր է ոչ թե պարտադրված, այլ ազատ կամքով ընտրված բարին:

Մարդու երկրային կյանքն ունի երկու սահման՝ սկիզբ և վերջ: Բեղմնավորումը և մահը Աստծո ներկայության երկու ձևերն են. առաջինը նվիրում է երկրային կյանք, երկրորդը՝ բացում այն հավիտենականության համար: Մարդ չի կարող խուսափել ինչպես առաջին հանդիպումից, այնպես էլ երկրորդից: Մարդկային կյանքի երկու սահմանները՝ կյանքն ու մահը, բովանդակում են արարչագործության առեղծվածը և Քրիստոսի խաչի խորհուրդը: Այս երկուսի միջև տարածքը պատկանում է մարդու ազատությանը, բանականությանը, իր կամքին և իր կյանքին: Այդ ազատությունը չի խաթարվում նույնիսկ Աստծո

կողմից: Բայց այդ սահմաններից այն կողմ գործում է Աստծո կամքը և մարդը կոչված է հարգելու այն⁷:

Քրիստոնեությունն ազատության արժեքը տեսնում է Աստծուն հավատալու մեջ, մարդկային ազատ կամքի՝ աստվածային կամքին ենթարկելու մեջ: Ճշմարտության ճանապարհով քայլելու այս օրինակը Հիսուս եղավ, ով Գեթսեմանիում քրտինքն արյան փոխած՝ իր աղոթքն ավարտեց հետևյալ խոսքերով. «Բայց ոչ թե իմ կամքը, այլ քոնը թող լինի» (Ղուկ. ԻԲ 42): Այս հնազանդությունն իրականացավ խաչի վրա:

Տեղին է հիշել նաև էզզիստենցիալիստ Գաբրիել Մարսելի խոսքերը. «Մարդն ազատ չի ծնվում. այն նրան պարգևում է Աստված»⁸: Մարդն ազատ է իր ընտրության մեջ, բայց իր ազատության դրսևորումների համար պատասխանատու է Նրա առջև, ով պարգևել է այդ ազատությունը: Կամքի ազատություն ունենալ դեռ չի նշանակում առանց բարոյական պատասխանատվության անել այն, ինչ հաճելի կամ լավ է թվում: Ազատության աստվածաբանությունն առանձնապես հանգամանորեն է զարգացրել սուրբ Պողոս առաքյալը: Դրա էությունն արտահայտված է հատկապես Գաղատացիներին ուղղված առաքյալի թղթում. «Եղբայրներ, դուք կոչված եք ազատության, միայն թե ձեր ազատությունը սոսկ մարմնի ցանկությունների համար չլինի» (Գաղ. Ե 13)⁹:

Այսպիսով, ազատությունը, որպես գերագույն պարգև, շնորհվել է մարդուն որպես միջոց և հնարա-

⁷ Տե՛ս **Элио Сгречча, Виктор Тамвоне**, Биоэтика, Москва, 2002, էջ 404:

⁸ /<http://www.gumer.info/bogoslov/Mapelm/70.php> (**Мапельман В., Пенькова Е.**, История Философии, 2006, 15 404):

⁹ Տե՛ս **Պատրիարք Կիրիլ**, Ազատություն և Պատասխանատվություն, Ս. Էջմիածին, 2009, էջ 91-92:

վորություն կատարելագործվելու: Բայց մարդն Աստծո պարզևած ազատությունը հաճախ ծառայեցնում է իր նպատակի ու շահի համար և երբեմն իրեն Աստված համարելով՝ վճռում է այնպիսի հարցեր, որոնք միայն Նա է տնօրինում: Մեփական կյանքի և մահվան ընտրությունը այդ խնդիրներից թերևս կարևորագույնն է: Մարդ, իրավունք չունենալով իր կյանքի նկատմամբ, փորձում է այդ իրավունքներն իրեն վերապահել. այս ինքնիշխանության հիմքում ընկած է Աստծո և հավիտենական կյանքի ժխտումը:

Տառապանքի գոյության իմաստը

Էվթանազիայի կողմնակիցների փաստարկներում որպես մահվան դիմելու հիմնավոր պատճառ առանձնահատուկ կերպով շեշտվում է տառապանքը: Նրանք այն կարծիքի են, որ ահագնացող և շարունակական տառապանքների դեպքում միակ ելքը մահն է: Կյանքի իմաստը գնահատվում է հաճույքների և տառապանքների համեմատությամբ. եթե տառապանքները գերազանցում են հաճույքները, այդ դեպքում կյանքի իմաստն ու մահվան խնդիրը որոշվում է տվյալ անհատի կողմից:

Աստվածաբանության էական խնդիրներից մեկը տիեզերքում տառապանքների գոյության իմաստի ընկալումն է: Մարդը տառապանքի էակ է, ավելին՝ մարդու կյանքի ամեն մի քայլափոխ լի է տառապանքով և այդ տառապանքները ուղեկցում են մարդուն մինչև իր կյանքի վերջը: Սակայն քրիստոնեությունը սովորեցնում է, որ այս կյանքի տառապանքներն անիմաստ չեն: Տառապանքի իմաստի քրիստոնեական ընկալումը

հասկանալու համար նախ պետք է իմանալ, թե ինչպես տառապանքը մուտք գործեց մարդկային կյանք և ինչու՞ է այն մարդուն ուղեկցում իր ողջ կյանքի ընթացքում:

Մարդաբանական իմացության մասին հիվանդների հոգեկան պատկերացումներից դուրս գոյություն ունի նաև աստվածաբանական մի հին պատկերացում, որի համաձայն՝ մարմնի հիվանդ վիճակն իր մեջ պարունակում է նաև կրոնական իմաստ: Մարդու հեռացումն Աստուծոց՝ կյանքի աղբյուրից, մարմնի հիվանդ վիճակի գլխավոր պատճառն է:

Սուրբ գրքում հստակ է, որ ցավն ու տառապանքը մեղսագործությունից անմիջապես հետո աշխարհի մտան՝ «Պիտի անչափ բազմացնեմ քո ցավերն ու քո հառաչանքները: Ցավերով երեխաներ պիտի ծնես, քո ամուսնուն պիտի ենթարկվես և նա պիտի իշխի քեզ վրա» (Օսնդ. Գ 16): Այնուհետև Աստված Ադամին ասաց. «Թող անիծյալ լինի երկիրը քո արածի պատճառով: Տանջանքով հայթայթես քո սնունդը քո կյանքի բոլոր օրերին» (Օսնդ. Գ 17): Սա նշանակում է, որ տառապանքը մուտք է գործել մարդու կյանք որպես անկման անխուսափելի հետևանք:

Մարդու նախասկզբնական մեղքը՝ աստվածակենտրոնությունից եսակենտրոնության դառնալը, նախևառաջ նշանակում էր, որ նա աշխարհին և մարդկանց այլևս չէր նայում որպես Աստծո հետ հաղորդության խորհուրդ: Նա դադարեց կյանքը դիտել որպես պարզև, ինչը գոհաբանությամբ պիտի վերադարձվեր տվողին և սկսեց դրանց վերաբերվել որպես իր սեփականության, որ կարելի է յուրացնել, շահագործել և ոչնչացնել: Այսպիսով՝ մարդն այլևս ուրիշ անձանց և

իրերը չէր տեսնում այնպես, ինչպես դրանք կային Աստծով, այլ միայն այն հաճույքի և բանականության տեսանկյունից, որ դրանք կարող էին պատճառել իրեն: «Հող էիր և հող էլ կդառնաս» (Ծննդ. Գ 19). սա բնորոշ է անկյալ մարդուն այն պահից սկսած, երբ նա հեռացավ կյանքի միակ աղբյուրից՝ Աստծուց:

Մարդու անկման հետևանքները թե՛ ֆիզիկական, թե՛ բարոյական էին: Ֆիզիկական մակարդակում մարդը ենթակա դարձավ ցավին ու ախտին, ծերության սկարբությանն ու մարմնական անկայունությանը: Կնոջ նոր կյանք տալու բերկրանքը միախառնվեց որդեծնության ցավերին (հմմտ. Ծննդ. Գ 16): Անկման հետևանքով մարդը ենթակա դարձավ նաև ֆիզիկական մահվան ժամանակ հոգու և մարմնի բաժանմանը:

Բարոյական անկման հետևանքով մարդը մատնվեց հուսալքության, ձանձրույթի և վիատության: Նա ենթարկվեց ներքին օտարացման. դուրս գալով ինքն իր դեմ՝ նա դարձավ իր իսկ ախոյանն ու դահիճը:

Մեղքի հետևանքները ծանր են լինում մարդու համար: Վերջինս կորցնում է նախնական պարզևները, և ցավն ու տառապանքը մարդուց անբաժան են դառնում: Մարդն ընկնում է մահվան իշխանության տակ՝ հոգևոր, մարմնական և հավիտենական: Հոգևոր մահը սկսվում է անկումից անմիջապես հետո, որին հաջորդում է մարմնավոր մահը: Իսկ հավիտենական մահը բնական հետևանքն է առաջինի, որովհետև Աստծուց հեռանալը դիտվում է որպես մահ:

Հրեական ընկալման համաձայն՝ մահվան պատճառը մեղքն է, որը հնարավոր է քավել միայն մահվամբ. սա է հանդիսանում հավիտենական կյանքի միակ ճանապարհը: Մարդու փրկությունը սկսվում է մահվամբ: Ըստ

Թորայի՝ մահ բառն առաջին անգամ դուրս ելավ Աստծո շուրթերից՝ իբրև դատավճիռ դրախտում ապրող նախամարդու անհնազանդության մեղքի:

Նոր Կտակարանում ևս հանդիպում ենք այն փաստին, որ հիվանդությունները և տառապանքները մեղքի հետևանք են: Հիվանդության մասին Եկեղեցու աստվածաբանական մոտեցումն ու մեկնաբանությունը մեծապես պայմանավորված են Հիսուս Քրիստոսի երկրային գործունեությամբ ու առաքելությամբ: Նորկտակարանյան պատմությունները մեզ բազմաթիվ տեղեկություններ են հաղորդում Հիսուսի գործած հրաշք-բժշկությունների՝ կաղի, կույրի, անդամալույծների, բորոտների բժշկությունների, դևերի հալածման մասին¹⁰: Նոր կտակարանում և Գործքում նշվում է Հիսուսի և առաքյալների գործած բժշկության քսանինը դեպք: Ուշադրության է արժանի այն իրողությունը, որ երբեմն հիվանդին բժշկելուց առաջ Հիսուս նախ մեղքերի թողություն էր տալիս, որից հետո կատարվում էր բժշկությունը: Այս հանգամանքը շատ պարզ արտահայտված է անդամալույծի բժշկման դրվագում: Հիսուս, տեսնելով անդամալույծին իր մոտ բերած մարդկանց հավատը, ասաց անդամալույծին. «Քո մեղքերը քեզ ներված են» (Մատթ. Թ 2): «Արդ, որպեսզի իմանաք, որ մարդու Որդին իշխանություն ունի երկրի վրա մեղքերը ներելու,- ասաց նա այդ ժամանակ անդամալույծին,- վե՛ր կաց, վերցրո՛ւ քո մահիճը և գնա՛ քո տունը» (Մատթ. Թ 6-7): Այս հատվածում հստակ է, որ անդամալույծի մեղքերի ներումը բժշկեց նրա հիվանդությունը:

¹⁰ Մատթ. Ը 14-17, Թ 1-8, Թ 18-26, Մարկ. Ա 40-45, Է 33, Ը 23-26, Ղուկ. Ը 46:

Քրիստոնեությունը մարդուն բաժին հասնող հիվանդությունների մեծ մասը պայմանավորում է նրա անբնական և անբանական կյանքով, որի ընթացքում նա իր մեղքերի պատճառով խախտում է աստվածային պատվիրաններով և բնական օրինաչափություններով սահմանված վարքաձևերը: Մրա լավագույն վկայություններից մեկը տեսնում ենք Սիրաքի իմաստության մեջ. «Ով մեղանշում է իր Արարչի առջև, նա կընկնի բժշկի ձեռքը» (Սիրաք ԼԸ 15):

Քրիստոնյայի կյանքը որդու կյանք է. նա պետք է ընդունի այն, ինչ տալիս է հայրը: Աստված մարդուն միայն բարիք է ցանկանում, ինչպես հայրն է որդուն բարիք ցանկանում, սակայն միշտ չէ, որ մարդը հասկանում է Աստծո տվածի իմաստն ու նպատակը: Մեղքից է առաջանում տառապանքը և տառապանքի միջոցով է հաղթահարվում մեղքը: Կյանքում մշտապես իրականանում է այն օրենքը, որ մեղքի դիմաց տառապանք է տրվում: Այս տառապանքն իմաստալից է այնքանով, որքանով որ այն հնարավորություն է տալիս քավելու մեղքը: Մեղքի հաղթահարման այս ուղին ոչ միայն մաքրում է մարդու հոգին, այլև իմաստություն է տալիս՝ գիտակցելու և բացահայտելու կյանքի բարոյական կողմը, կյանքի իմաստի ողջ խորությունը, թեկուզ՝ տառապանքների գնով: Մարդը յուրաքանչյուր տառապանք կկարողանա հաղթահարել, եթե դրանում իմաստ տեսնի: Քրիստոնեական աստվածաբանության մեջ շեշտվում է այն միտքը, որ ամենամեծ տառապանքը տառապանքի աննպատակ լինելու գիտակցության մեջ է, որն առաջանում է հավատքի բացակայությունից: Նույն միտքն է արտահայտում Նիցշեն՝ ասելով, որ

մարդու համար անտանելի է ոչ թե տառապանքը, այլ տառապանքի անիմաստությունը:

Քրիստոնեական աստվածաբանությունը յուրահատուկ մոտեցում ունի տառապանքի նկատմամբ՝ հիմնվելով Հիսուս Քրիստոսի տառապանքների վրա¹¹: Ինչպես աստվածաբան Բերնարդ Հարինգն է ասում՝ «Քրիստոս ֆիզիկապես չարչարվեց և սարսափելի տառապանքներ կրեց՝ անցնելով մարմնական ցավից անդին»¹²: Քրիստոս անմեղ տառապանք կրեց, բայց ոչ աննպատակ: Նրա տառապանքների քավչարար ուժը բացահայտվում է մարդկության մեղքերի քավման մեջ: Հիսուսի տառապանքները բժշկող ազդեցություն ունեցան տառապանքների աշխարհում¹³: Ցավն ու տառապանքը մեղքի միջոցով աշխարհի մտան, բայց հենց դրա միջոցով Քրիստոս հաղթեց դրանց: Ոչ մի տառապանք անիմաստ չէ, այլ տառապողն է սխալ ընկալում այն: Կարևոր այս իրողությունը բացահայտվում է հետևյալ ճշմարտությամբ. Նա մարդկության պատմության մեջ միակ անմեղ մարդն էր և միևնույն ժամանակ ամենամեծ տառապողը, սակայն Նրա անմեղ տառապանքը փրկեց ողջ մարդկությանը: Եվ ինչպես Քրիստոսի անմեղ տառապանքները պտղաբերեցին ամբողջ մարդկության համար, այնպես էլ ցանկացած մարդու տառապանքն է պտղաբերում իր և իր նմանների համար: Այս կյանքի տառապանքների հաղթահարումը շնորհի է արժանացնում մարդուն՝ մասնակից դարձնելով Քրիստոսի տառապանքներին: Այս մասին է վկայում Պետրոս առաքյալը. «Միրելինե՛ր,

¹¹ St' u Companion Encyclopedia of Theology, էջ 832:

¹² Անդ, էջ 832:

¹³ St' u **Paul S. Fiddes**, The Creative Suffering of God, Oxford, 1992, էջ 110:

տարօրինակ մի՛ համարեք այն այրող նեղությունը, որ ձեզ փորձելու համար է, որպես թե մի տարօրինակ բան պատահած լինեք ձեզ: Այլ, որպես Քրիստոսի չարչարանքներին մասնակիցներ, ուրա՛խ եղեք, որպեսզի նրա փառքի հայտնության ժամանակ էլ ցնծաք և ուրախանաք» (Ա Պետրոս Դ 12-13):

Սուրբ Գիորգն ասում է. «Ուղղի՛ր քո սիրտը, համբերի՛ր և շփոթության մի՛ մատնվիր աղետների ժամանակ: Փարվի՛ր Տիրոջը և մի՛ հեռացիր, որպեսզի հետագայում բարձրանաս: Ինչ էլ որ գա քո գլխին, ընդունի՛ր հոժարությամբ և հաճախադեպ տառապանքների ժամանակ համբերատար եղիր» (Սիրաք Բ 2-6): Համբերության այս պատգամն ինքնին վկայում է, որ տառապանքներն անիմաստ չեն, քանզի «ոսկին փորձվում է կրակի մեջ, մարդը՝ տառապանքների բովում» (Սիրաք Բ 5):

«...Բայց հավատարիմ է Աստված, որ ձեզ ավելի փորձության մեջ չի զցելու, քան կարող եք տանել, այլ՝ փորձության հետ փրկության ելք էլ է ցույց տալու, որպեսզի կարողանաք համբերել», - շեշտում է Պողոս առաքյալը (Ա Կորնթացիս Ժ 13):

Իսկապես, Աստված երբեք մարդուն թույլ չի տալիս կրելու առավել մեծ տառապանք, քան նա կարող է տանել, եթե ունենա համբերություն և ընդունի այն շնորհն ու ուժը, որ Ինքն է տալիս մարդուն պայքարի ընթացքում: Եթե Աստված թույլ է տալիս, որ տառապանքը մուտք գործի մարդու կյանք, Նա դրանում մեծ բարիք է դնում, որին մարդն արժանանում է այն հաղթահարելու միջոցով¹⁴:

¹⁴ Amazon.com: Suffering: The Catholic Answer: **Hubert van Zeller**:

Եթե ամփոփենք տառապանքի քրիստոնեական ողջ իմաստը, ապա այն կարելի է մեկ մտքով արտահայտել. տառապանքը բացահայտում է կյանքի խոր իմաստը և մարդուն հասկացնել տալիս, որ նա տիեզերքի տերը չէ, մարդուն, ով ներկայիս տեխնիկայով հագեցված ժամանակաշրջանում իրեն Աստված է զգում և ում թվում է, թե ինքը կարող է գերազանցել Աստծո արարչագործությունը: Տառապանքը մարդուն դարձնում է ավելի մարդկային, օգնում նրան վերականգնելու իսկական կապն Աստծո հետ¹⁵: Այն, մարդուն ներշնչելով իր սկարության ու խոցելիության գիտակցությունը, առավել քան մարդկային կյանքի որևէ երևույթ կամ փորձառություն, բացահայտում է մարդու` Աստծո փառքի ու գթասարտության ենթակա լինելը¹⁶: Տառապանքը մարդու համար բարոյական արժեքների և հոգևոր ուժի աղբյուր է, որն առաջնորդում է հավատի, սիրո և հոգևոր աճի¹⁷: Մարդկության պատմությունը ցավի պատմություն է: Ցավն ու տանջանքը մարդու կյանքի անբաժան մասն են, և նրա կյանքի յուրաքանչյուր հանգրվան ունի իր ցավն ու տառապանքը: Բայց կարևորն այն է, որ դրանք մարդու հոգևոր կյանքի հիմքն են¹⁸:

¹⁵ Տե՛ս **Ջովաննի Գուայտա**, Զրույցներ Ջովաննի Գուայտայի հետ, Ս. Էջմիածին, 2001, էջ 259:

¹⁶ Հմմտ. **Roland Chia**, The right to die? A christian response to euthanasia, National Council of Churches of Singapore, 2009, էջ 98:

¹⁷ Հմմտ. **Paul Badham, Paul Ballard**, Facing Death, University of Wales Press Cardiff, 1996, էջ 112, (**Paul Badham**, A Theological Examination of the Case for Euthanasia):

¹⁸ **Joseph A. Amato**, Victims and values, A History and a theory of suffering, New York, 1990, p. 1:

Տառապանքներից ազատվելը էվթանագիայի կարևոր դրդապատճառներից է: Բայց արդյո՞ք գոյություն ունի սպասվող հանգստությունը: Քրիստոնեությունն ասում է, որ դա հուսախաբություն է, որը հանգեցնում է ավելի մեծ տառապանքների, սակայն՝ այն աշխարհում:

Ժամանակակից աշխարհում գնալով ավելանում են բժիշկների, բժշկական տեխնիկայի հնարավորությունները, բարձրանում է բուժման մակարդակը, բայց հիվանդություններն ոչ միայն չեն պակասում, այլև ավելանում են: Հիվանդությունների աճը և բազմազանությունը վկայում է այն մասին, որ մարդու խաթարված ընթացքն աշխարհի վրա շարունակում է խորանալ, որի հետևանքով մարդկության մեղքերն ավելի բազմազան և բազմաբնույթ են դառնում: Աստված մարդուն առողջ է ստեղծել, իսկ հիվանդություններն ու առհասարակ ցանկացած նեղություն անցյալ, ներկա և նույնիսկ ապագա մեղքերի համար են տրվում՝ կամ որպես մեղքի քավություն կամ էլ դեռևս չգործված մեղքերի կանխում, քանզի Տերը «չի ուզում, որ որեւէ մեկը կորստյան մատնվի, այլ ուզում է, որ ամենքը ապաշխարեն» (Բ Պետրոս Գ 9):

Էվթանագիան խախտում է ոչ միայն չսպանելու հինկտակարանյան պատվիրանը (Ելք Ի 13), այլև ոտնահարում է Քրիստոսի սիրո մեծագույն պատգամը. «Նոր պատվիրան եմ տալիս ձեզ, որ սիրեք միմյանց. ինչպես ես ձեզ սիրեցի, դուք էլ միմեանց սիրեցեք» (Հովհ. ԺԳ 34): Նման սիրո դրսևորման գորավոր միջոցներից մեկն էլ խնամքն է այն մարդու նկատմամբ, ով առավել դրա կարիքն է զգում: Մեր վերաբերմունքն Աստծուն պայմանավորվում է Նրա պատկերը կրող

Էակի հանդեպ վերաբերմունքով: Աստծուն ընտրելն ու Նրան ծառայելը նշանակում է սիրով տոգորվել մերձավորի նկատմամբ, ինչից բխում է սեփական անձից վերանալու և մերձավորին ծառայելու պատրաստակամությունը: Երբ խնամքով, հոգատարությամբ ու սիրով ենք շրջապատում տառապանքի մեջ գտնվող մեր հարազատներին և անձանոթներին, օգնում ենք նրանց կյանքի վրա կենտրոնանալու: Պետք է հիվանդին հաշտեցնել կյանքին, կիսել նրա ցավը, վանել վախի ու լքվածության զգացումը: Եթե լքվածության ինչ-որ մի պահի տառապանքն ու կյանքն անտանելի և անիմաստ են թվում, ապա մեր ներկայությունն ու սերն անբացատրելի իմաստ են հաղորդում հիվանդի կյանքին. նա հասկանում է, որ իր կյանքը, ցավն ու տառապանքը միայն իրենը չէ, այլ կան մարդիկ, ովքեր ապրում են նաև իրենով, տեսնում է կյանքում արժեքներ, հանուն որոնց պետք է և արժե ապրել¹⁹: Իրական սերը տառապողի նկատմամբ ոչ թե մահվան օգնության մեջ է, այլ նրա հետ տառապանքը կիսելու մեջ: Այդ սերը կաթոլիկ աստվածաբան Մակքորմիկը կյանքից ավելի մեծ արժեք է համարում, որովհետև միայն հարազատի նկատմամբ դրսևորած սիրո միջոցով է, որ արտահայտում ենք մեր սերն Աստծո նկատմամբ²⁰: Հենց այս հանգամանքերում է, որ հանգիստ մահվան հանձնվելու հիվանդի հոգեբանությունը փոխարինվում է պայքարել հանուն կյանքի կարգախոսով:

Էվթանազիայի կողմնակիցները հասարակության ուշադրությունը հրավիրում են խղճահարություն և գթասրտություն առաջացնող փաստերի վրա.

¹⁹ Տե՛ս Էվթանազիա և բժշկական էթիկա, էջ 31:

²⁰ Տե՛ս Companion Encyclopedia of Theology, էջ 831:

Էվֆրանագիան համարվում է գթասրտություն նրա նկատմամբ, ում օգնում են մահանալ և արդարացի՝ շրջապատի և հասարակության նկատմամբ:

Այն դեպքում, երբ Էվֆրանագիան կատարվում է գթասրտության քողի տակ, պետք է մի բանում համոզված լինել. բժիշկը և առհասարակ որևէ էակ ավելի գթասիրտ չէ, քան Նա, ով մարդկային էակին է արարել: Աստված մարդուն կյանք է շնորհել, և Նա էլ կանխորոշված ժամկետում այն նրանից վերցնում է: Սիրաքի իմաստության մեջ ասվում է. «Տիրոջ բոլոր գործերը շատ բարի են, և նրա բոլոր հրամանները կատարվում են իրենց ժամանակին. վայել չէ ասել՝ ի՞նչ է սա, կամ ինչու՞ է սա, քանզի ամեն ինչ պիտի կատարվի իր ժամանակին» (Սիրաք ԼԹ: 21): Քանի դեռ մարդը երկրային կյանքի մեջ է, հնարավորություն ունի շատ բան ճանաչելու և որ գլխավորն է՝ իր ընթացքից դարձի գալու: Տառապող հիվանդը սովորաբար շատ մոտ է կանգնած լինում ճանաչողության այդ սահմանին և ո՞վ գիտի, միգուցե արդեն իսկ դրա մեջ է գտնվում, իսկ մարդուն կյանքից զրկելն Էվֆրանագիայի միջոցով ոչ միայն բռնությամբ հոգու վտարում է, այլև միգուցե զրկում՝ ճանաչելու և մեղանչելու հնարավորությունից: Եթե Աստված կամենա, որ հիվանդը մահանա, ապա կատարելագործված տեխնիկան ոչինչ չի կարող անել, բայց քանի դեռ հիվանդը կա, ապրում է, ուրեմն դա Աստծո կամքն է և պետք է ընդառաջ գնալ Նրա կամքին: Աստծո կամքին ընդառաջ գնալն այս պարագայում Նրա իսկ կողմից մարդուն պարզված շնորհի ճիշտ օգտագործումն է՝ պահելու, պահպանելու և արդյունավորելու կյանք, որը սուրբ է:

Ինչպես Սուրբ Գիրքն է ասում, «մեր կյանքի սկիզբը և վախճանը Տիրոջ ձեռքում է» (Հովհ. ԺԲ 10): Չպետք է առաջնորդվել մարդկային չափորոշիչներով՝ կյանքի արժեքը սահմանելու համար: Այդ արժեքն արդեն իսկ Աստծո կողմից բացարձակ է տրվել մարդուն, բացարձակ այն կոչումով, որ նա այլևս պահապանն ու պատասխանատուն է այդ անսահման արժեքի: Իսկ իրականում գթասրտությունը ոչ թե մահվան օգնության մեջ է, այլ նրա հետ ցավը կիսելու, նրան կարեկից լինելու մեջ, որը հիմնավորվում է Հիսուսի խոսքերում՝ «հիվանդ էի և ինձ տեսնելու եկաք...» (Մատթ. ԻԵ 36): Իրականում էվթանագիան արդարացնող ցանկացած հիմնավորում և գործողություն հիվանդի լքման մի ձև է:

Շատ ցավալի է, որ այնպիսի կենսական ու բարոյական հարց, ինչպիսին մարդու կյանքի պահպանումն է, բանավեճերի առարկա է դարձել և քննարկվում է երկու իրարամերժ և հակադիր մոտեցումներով. հիվանդին խնամելու հետ մեկտեղ բարոյական է համարվում նաև մահվան օգնությունը: Վերաբերմունքը մահվանը, վարքը մահվան ընթացքում մարդկային կյանքի կարևորագույն պահն է. այն անկասկած մնում է բարոյական պատասխանատու ընտրության սահմաններում, քանզի Տիրոջն է կյանքի և մահվան իշխանությունը (հմմտ. Իմաստ. Սողոմոնի ԺԶ 13):

Էվթանագիայի մասին վեճերը շարունակվում են, օրեցօր ավելանում են նրա օրինականացման փորձերն ու հաջողությունները, իսկ թե ինչ կլինի մոտ ապագայում, հայտնի չէ. միայն մի բան պետք է հիշել՝ մարդու հետագա գոյությունը կախված է նրա հոգևոր վիճակից: Պարզապես չպետք է մոռանալ, որ Աստված

կարևորում է յուրաքանչյուր առանձին մարդու՝ նրա մեջ դնելով և տեսնելով այն անձայրաձիր արժեքը, որ Տիրոջ համար քննարկման ենթակա չէ: Այնպես է ծրագրվել, որ մեկ մարդու կյանքը հավասարագոր է ողջ աշխարհի գոյությանը, այն աշխարհի, որն ստեղծվել է ընդամենը որպես մարդու բնակավայր:

ԶԵԿՈՒՅՑ Գ

Մուսաննա Դավթյան

*ԵՊԲՀ ղոցենտ, UNESCO-ի բիոէթիկայի ամբիոնի
միջազգային ցանցի հայկական բաժանմունքի վարիչ*

ԷՎԹԱՆԱԶԻԱ

Որտե՞ղ և ինչու՞ է այն օրինականացվում
Արդյո՞ք սպանությունն ունի արդարացում

Էվթանազիայի հիմնահարցը ծագել է անտիկ ժամանակներից և միշտ թեժ վեճեր հարուցել: «Էվթանազիա» եզրը առաջարկել է 17-րդ դարի անգլիացի փիլիսոփա Ֆրենսիս Բեկոնը իր «Նոր Օրգանոն» աշխատության մեջ՝ այն բնորոշելով իբրև թեթև, ոչ ցավագին մահ:

«Թեթև մահ» եզրը օգտագործվել է նաև Կաթոլիկ եկեղեցու Դավանաբանության կոնգրեգացիայի 1980թ. մայիսի 5-ին ընդունված «Հռչակագիր էվթանազիայի մասին» փաստաթղթում, որտեղ տրված է էվթանազիայի վերջնական պարզաբանումը. «**Էվթանազիա ասելով հասկացվում է ցանկացած գործողություն կամ, ընդհակառակը, անգործություն, որն իր էությամբ կամ դիտավորությամբ հանգեցնում է մահվան: Այսինքն՝ իր ուղղակի նշանակությամբ, էվթանազիան բժշկի օգնությամբ կանխամտածված սպանությունն է:**»

Դա չի վերաբերում ինքնասպանությանը և ցավազրկող թերապիայի հետևանքով առաջացած մահվանը:

Էվթանազիայի կողմնակիցները հետևյալ նկատառումներով են ընդունելի համարում այն.

- մահը որպես հիվանդի տառապանքները դադարեցնելու վերջին միջոց
- հիվանդի մտահոգվածություն իր հարազատների նկատմամբ. «Չեմ ուզում հարազատներիս համար բեռ դառնալ»
- հիվանդի եսասիրական մղումներ. «Ուզում եմ արժանապատվորեն մեռնել»
- հանրության մեջ հիվանդագին զենքերի տարածումը կանխելու նպատակով ոչ լիարժեք կյանքի ոչնչացման անհրաժեշտություն
- նպատակահարմարության սկզբունք. անհուսալի հիվանդների կյանքի պահպանությանն ուղղված անարդյունք և երկարատև միջոցառումների դադարեցում, որպեսզի բժշկական սարքավորումներն օգտագործվեն հիվանդության ավելի նախնական փուլերում գտնվող հիվանդների վերականգնման համար
- տնտեսական. մի շարք անբուժելի հիվանդությունների բուժումը և կյանքի պահպանումը պահանջում է բավական թանկարժեք դեղորայքի և սարքավորումների կիրառում:

Հարկ է նշել, որ վերջին երեք սկզբունքները լայնորեն օգտագործվել են ֆաշիստական Գերմանիայում, որտեղ «ոչ լիարժեք» մարդկանց ոչնչացումը, ինչպես նաև ծանր վիրավորների սպանությունը ոչ այլ ինչ էր, եթե ոչ պետական քաղաքականություն:

Էվթանազիայի հակառակորդների փաստարկներն են՝

- կրոնական-բարոյական դիրքորոշումներ. «Մի սպանիր» և «Միրիր մերձավորիդ հանուն Աստծո»
- ինքնամաքրում տանջանքի միջոցով և ծանր հիվանդ մարդկանց խնամքի միջոցով փրկվելու հույս
- բժշկությանը հայտնի են ոչ քիչ դեպքեր, երբ ծանր, անբուժելի համարվող հիվանդությունը (օրինակ՝ քաղցկեղը) ինքն իրեն բուժվել է

- բժշկության զարգացման իմաստը բուժման նոր մեթոդների, հնարավորությունների, ուղիների հայտնաբերումն է, անբուժելի համարվող հիվանդությունների և մահվան դեմ պայքարն է:

Եթե հիվանդությունն այսօր անբուժելի է, պետք է ամեն կերպ ձգտել այն բուժելի դարձնել և ոչ թեթև սրտով հայտարարել՝ անբուժելի է ու հեշտորեն հիվանդից ազատվել: Հասարակության ակտիվ սոցիալական դիրքորոշման պարագայում հաշմանդամության ցանկացած փուլում գտնվող մարդուն գործնականում հնարավոր է վերականգնել և վերադարձնել հասարակական ակտիվ կյանք:

Էվթանազիայի առավել հետևողական հակառակորդները հոգևորականներն են, ովքեր թե՛ ակտիվ և թե՛ պասիվ էվթանազիան համարում են Աստծո օրենքների հակառակ գործողություն:

Բժիշկների և իրավագետների ճնշող մեծամասնությունն էվթանազիան կտրականապես անթույլատրելի են համարում, եթե նույնիսկ այն ձեռնարկվում է բացառապես «գթասրտության» նկատառումներով:

Հայաստանի Հանրապետության «Բնակչության սանիտարա-համաճարակային անվտանգության ապահովման մասին» 1996թ. ընդունած օրենքի 23-րդ հոդվածում, որը վերնագրված է «Էվթանազիայի արգելումը», գրված է. **«Հայաստանի Հանրապետությունում արգելվում է էվթանազիան՝ հիվանդի խնդրանքով նրա մահվան արագացումը, որևէ գործողությամբ և միջոցներով:** Այն անձինք, ովքեր հիվանդին գիտակցաբար դրդում են էվթանազիայի կամ իրականացնում են այն, կրում են պատասխա-

նաստվություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով»:

Այսօր Ռուսաստանի Դաշնությունում օրենսդրորեն արգելված են էվթանազիայի բոլոր ձևերը: Ռուսաստանի Դաշնության «Քաղաքացիների առողջության պահպանման մասին» օրենսդրության հիմունքների 45-րդ հոդվածում գրված է. «Բժշկական անձնակազմին արգելված է էվթանազիայի իրականացումը»:

Նման իրավիճակ արձանագրված է նաև երոպական մի շարք երկրներում, որտեղ էվթանազիան ոչ միայն արգելվում, այլև դատապարտվում է քրեական օրենսգրքով: Օրինակ՝ Գերմանիայի Դաշնության քրեական օրենսդրությամբ «հիվանդի խնդրանքով սպանություն» իրականացնելու համար սահմանված է 6 ամսից մինչև 5 տարի ազատազրկում: Ֆրանսիան ևս կտրականապես դեմ է էվթանազիային:

20-րդ դարի սկզբներին Գերմանիայում իրավագետ-բժիշկ Բինդինգը և հոգեբույժ Գոխեն փորձեցին հիմնավորել ազգի և մարդկության համար «ոչ լիարժեք» անձանց ոչնչացման անհրաժեշտությունը՝ բնորոշելով էվթանազիան որպես «ոչ լիարժեք» կյանքի ոչնչացում: «Էվթանազիա» հասկացության նման չարագուշակ մեկնաբանությունը հետագայում լայն տարածում գտավ ֆաշիստական Գերմանիայում, որտեղ մշակվեց անգամ մի ողջ ծրագիր: Դրա մասին հայտարարվել է 1933թ. հուլիսի 14-ին «Ազգի առողջության պահպանման» հոչակագրում, որի հեղինակներից մեկը հանրահայտ Ռոզենբերգն էր իր ռասիստական գաղափարախոսությամբ: Հոչակագիրը բաղկացած էր 3 կետից՝ անբուժելի հիվանդների ոչնչացում, հատուկ գործողությամբ ոչնչացում,

զանգվածային ամլացում: Հավանություն տալով Էվթանագիային որպես անհուսալի հիվանդ արիացիների բացառիկ արտոնություն՝ 1939թ. սեպտեմբերին Հիտլերը ստորագրեց գաղտնի հրամանագիր, որի համաձայն՝ «կյանքի բոլոր ձևերը, որոնք անարժան են կյանքին» հարկավոր է ենթարկել Էվթանագիայի: «Անարժանության» հարցը ամեն կոնկրետ դեպքում որոշվում էր բժշկական «եռյակի» կողմից: Դրա հետևանքով ամենատարբեր աղբյուրների համաձայն՝ երկու տարվա ընթացքում ոչնչացվեց 100 հազարից մինչև 275 հազար մարդ:

Նյուրենբերգի միջազգային զինվորական դատարանն այդ գործողությունները որակեց որպես մարդկության դեմ կատարված ոճրագործություն:

Բժշկության և բարոյագիտության առնչություններին վերաբերող մտքեր հանդիպում ենք միջնադարյան հայ փիլիսոփաների, բժիշկների, աշխատություններում: Մասնավորապես, միջնադարի մեծ մտածող Դավիթ Անհաղթն իր «Մահմանք իմաստասիրության» գրքի 9-րդ գլխում, շարունակելով հայ մեծանուն կաթողիկոս Ներսես Մեծի և այլոց մտքերը, հարց է տալիս՝ արդյոք իրավունք ունի՞ կամ կարո՞ղ է բժիշկը թույն տալ անբուժելի հիվանդին և պատասխանում է՝ ոչ, որովհետև, «ինչպես լավ նավապետը փորձվում է ոչ թե խաղաղ ծովում, այլ ալեկոծության ժամանակ, նույնպես և խիզախ հոգին փորձությանն ընդառաջ է գնում»:

Անհաղթի այս մտքերը բխում են փիլիսոփայական նույն դիրքերից, որոնք արտահայտվել են Հիպոկրատեսի հանրահայտ երդման մեջ, որտեղ ի թիվս այլ արգելքների, բժիշկը երդվում է. «Խոստանում եմ, չնայելով խնդրանքի, ոչ ոքի չտալ մահացու դեղ»:

Իսկ այն բժիշկը, որ ելնելով այս կամ այն դրդապատճառից, այնուամենայնիվ, դրժում է իր երդումը և թույն տալիս հիվանդին, ենթարկվում է ոչ միայն բժշկության աստվածների և մարդկանց անեծքին, այլև վարչական պատժի, ընդհուպ՝ մահապատժի: Այդ մասին կարդում ենք հինգերորդ դարի հայ պատմիչ, քերթողահայր Մ. Խորենացու «Գիրք պիտոյից» աշխատության մեջ:

Հայտնի է, որ ստոիկյան փիլիսոփայության հետևորդներն արդարացնում էին ինքնասպանությունը ինը դեպքում՝ սով, բուրբ մերձավորների կորուստ, տարերային աղետ, մարդկային արժանապատվության ոտնահարում, անբուժելի հիվանդություն, գառամախտ և այլն:

Ինչպես նշում է պրոֆեսոր Ս.Ա. Վարդանյանը «Հայաստանի բժշկության պատմություն» աշխատության մեջ, վերջին երկու դեպքն ուղղակի կապ ունեն բժշկության հետ: Այսպես օրինակ, ստոիկներն ասում էին. «Արդ, ճիշտ է վարվում նաև նա, ով սպանում է ինքն իրեն, եթե նրա մարմինը ենթարկվել է ինչ-որ չար հիվանդության և փչացման, այդ անբուժելի ցավից ազատվելու համար»:

Մի ոմն կինիկյան (ցինիկ) փիլիսոփա, որը կիսով չափ անդամալուծված էր, դիմեց Հուլիանոս կայսերը, ասելով. «Մարմնիս կեսը մեռավ, իսկ մյուս կեսը դեռ ապրում է: Գթա, ո՛վ թագավոր, կիսված կինիկյանիս, հրամայիր բժշկել կամ սպանել: Այդպես էլ ճիշտ է վարվում նա, ով խորին ծերության հասնելով, վերջ է տալիս իրեն, երբ արդեն սկսում է գառանցել, աղճատ ու անկապ բաներ ասել»:

Եթե ստոիկների պատասխանը էվթանագիային «այո» էր, ապա հայ միջնադարյան փիլիսոփաներից, բժշկապետներից և ոչ մեկի աշխատությունում նման միտք չկա, այդ թվում՝ Դավիթ Անհաղթի, որը մերժում է ինքնասպանությունը. «Իսկ փորձությունները, որտեղ էլ դրանք պատահեն, գոյություն ունեն ոչ թե նրա համար, որ մարդ վերջ տա իրեն, այլ որպեսզի փորձեն մարդու ոգին»:

Հատկանշական է, որ միջնադարյան հայ օրենսդրական մտքի ռահվիրաներ Մխիթար Գոշի և Սմբատ Գունդստաբլի Դատաստանագրքերի 119 և 154 հոդվածների համաձայն՝ **միտումով և կամ տգիտության պատճառով հիվանդի առողջությունը վնասող բժիշկները, նաև իրենց աշակերտներին պատշաճ գիտելիքներ չտվող բժիշկները պատժապարտ էին**. Այսպիսով, ակնհայտ է բժշկի պատասխանատվության խոր գիտակցումը հայկական օրենսդրության մեջ, որ միաժամանակ վկայում է թե՛ երկրի բժշկանոցների և թե՛ ուսուցման մասնագիտական բարձր մակարդակի մասին:

Հասարակական կարծիքի մակարդակում ևս ամեննին չի խրախուսվում էվթանագիան: Ավելին՝ ինչ-որ իմաստով այն դատապարտվում է:

Լինում են բազմաթիվ դեպքեր, երբ մարդիկ, տեսնելով իրենց մերձավորների ահավոր տառապանքները, մտովի ցանկանում են նրանց մահը. «Երանի շուտ մեռներ, փրկվեր անասելի ցավերից, միննույն է օգնել, բուժել ոչ մի կերպ չենք կարողանում»: Սակայն մտովի արտահայտված ներքին ցանկությունը մեծամասամբ չի վերածվում գործնական քայլի, քանի որ հաջորդ միտքն է՝ ի՞նչ կասեն մարդիկ:

Այս հանգամանքը անհրաժեշտ է հաշվի առնել պարզելու համար էվթանագիայի նկատմամբ իրական վերաբերմունքը, նրա օրինականացման խորին հոգեբանական շերտերը, ներքին արգելքները: Այստեղ դրսևորվում է ոչ միայն հասարակական կարծիքի ուժը, այլ նաև աստվածասիրական դիրքորոշումների կայունությունը: Հարցված բժիշկներից մեկը հիշեցրեց այն պատգամները, որ Ամենաբարձրյալը շնորհեց Մովսեսին, երբ նա հրեաներին ազատեց եգիպտական գերությունից: **Առաջին պատգամն էր՝ «Մի՛ սպանիր»:** **Նկատենք, որ Աստվածաշնչում չկա որևէ հակադարձում այդ պատգամին, որևէ տարընթերցում ազատ մեկնաբանության ձևով: Պատգամը հնչում է կարճ ու ազդու, բացառում որևէ երկիմաստություն:**

Աստված մեզ կյանք է շնորհել, և Աստված էլ ի գորու է որոշելու, թե երբ ենք լքելու երկրային կյանքը:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Անդրադառնալով Էվթանագիայի երևույթի հոգեբանական կողմին, անհրաժեշտ է դիտարկել մի քանի կարևոր դրույթներ.

- «Հիվանդի տանջանքները» թեթևացնելու ցանկության տակ կարող է թաքնված լինել շրջապատի էգոիզմը:
- Դժվար է հաստատել, որ հիվանդը նման որոշում սթափ վիճակում է կայացրել, այլ ոչ հուսահատության կամ ուղեղի մթագման ժամանակ: Բացի այդ՝ այնքան էլ լավ չեն ուսումնասիրված կյանքի սահմանին գտնվող մարդու հոգեբանական վիճակները, և իրականում անհնար է կանխատեսել, թե Էվթանագիայի իրականացման հենց առաջին, սակայն արդեն սկսված փուլում, հիվանդը չի հրաժարվի իր այդ որոշումից՝ կամենալով շարունակել իր կյանքը տանջանքներով:
- Էվթանագիայի մասին խնդրանքը կարող է օգնության խնդրանք լինել: Երբ հիվանդն ասում է՝ սպանիր ինձ, նա խնդրում է՝ օգնիր ինձ, նա փորձում է իր ձայնը հասցնել շրջապատի մարդկանց:
- Ցանկացած դեպքում Էվթանագիան չի հանդիսանում թեթև մահ:

Էվթանագիայի ընդունման կամ մերժման հարցի քննարկման շրջանակներում պետք է հաշվի առնել նաև դրա ընդունման վտանգները:

- Էվթանագիան կարող է շատ մարդկանց մահվան պատճառ դառնալ: Հիվանդի մեջ կնվազի պայքարելու, դժվարություններ հաղթահարելու ցանկությունը:

- Էվթանագիայի ընդունումը կխարխլի վստահությունը բժշկի գործունեության նկատմամբ. հիվանդները կսկսեն կասկածել բժշկի ախտորոշման օբյեկտիվությանը:

- Էվթանագիան հնարավոր չարաշահումների առիթ կարող է դառնալ՝ նաև շահավետ պայմաններ ստեղծելով օրգանների փոխպատվաստմամբ զբաղվողների համար:

- Էվթանագիայի օրինականացումը կարող է խոչընդոտել բժշկության զարգացմանը, որովհետև բժշկությունը կոչված է բուժման նոր մեթոդների ու հնարավորությունների մշտական փնտրտուքի՝ անգամ այսօր անբուժելի համարվող հիվանդությունների պարագային:

Քրիստոնեական Եկեղեցու բարոյագիտական-աստվածաբանական տեսանկյունից Էվթանագիայի երևույթն անընդունելի է ու դատապարտելի: Այն համարվում է ոտնձգություն մարդկային կյանքի հանդեպ:

Հիմնական փաստարկներն են՝

- Կամավոր Էվթանագիայի (ինքնասպանության) կատարումով մարդը մեղք է գործում Մուրբ Հոգու դեմ, ժխտում Աստծու գոյությունն ու հավիտենական կյանքի իրականությունը: Աստված մարդուն կյանք է շնորհել, և Նա էլ կանխորոշված ժամկետում այն նրանից վերցնում է:

- Մարդկային ազատ կամքը՝ որպես Աստծո գերագույն պարզներից մեկը, չի կարող դրսևորվել առանց բարոյական պատասխանատվության: Քրիստոնեական տեսանկյունից այդ պարզնի գերագույն

արժեքը մարդու ազատ կամքը Աստծո բարի կամքին ենթարկելու մեջ է:

- Մարդը տառապանքի և հիվանդության է արժանանում, բացառությամբ որոշ պարագաների, իր և իր նմանի մեղքերի պատճառով, սակայն Աստված երբեք թույլ չի տալիս, որ մարդը կրի ավելի մեծ տառապանք, քան կարող է տանել:

- Էվթանազիան խախտում է ոչ միայն չսպանելու հինկտակարանյան պատվիրանը, այլև անտեսում է Քրիստոսի սիրո մեծագույն պատգամը: Իրական սերը տառապողի նկատմամբ ոչ թե մահվան օգնության մեջ է, այլ՝ նրա հետ տառապանքը կիսելու, որի արդյունքում հանգիստ մահվան հանձնվելու հիվանդի հոգեբանությունը փոխարինվում է հանուն կյանքի պայքարի կարգախոսով:

- Իրականում Էվթանազիան արդարացնող ցանկացած հիմնավորում և գործողություն հիվանդի լքման մի ձև է:

Էվթանազիայի ընդունումը կամ ժխտումը կապված է նաև սոցիալական խնդիրների հետ: Հաճախ այս քայլին դիմում են մարդիկ, որոնք ի վիճակի չեն գումարներ վճարել հիվանդի բժշկության համար: Գործնականում տեղի է ունենում պասիվ էվթանազիա:

Որպես էվթանազիայից խուսափելու լուծում առաջարկվում է այսպես կոչված «ամոքիչ բժշկություն»-ը, որի դեպքում հիվանդի նկատմամբ խնամք, հոգատարություն ցուցաբերելը նրան կարող է հանել դեպրեսիվ վիճակից:

ՀԱՎԵԼՎԱԾ Ա

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԷՎԹԱՆԱԶԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Էվթանագիան վճռականորեն դատապարտում են աշխարհի բոլոր հիմնական կրոնները՝ քրիստոնեությունը, իսլամը, հուդաիզմը, բուդդիզմը: Այս մասին ընդունվել են նաև համապատասխան փաստաթղթեր:

Քրիստոնեական Եկեղեցու հիմնական փաստարկները խարսխվում են այն հարցի վրա, որ կյանքը տրվել է Աստծո կողմից, և մարդու ծնունդն ու մահը Նրա ձեռքերում են: Այդ պատճառով մարդ արարածն իրավունք չունի իլելու որևէ մեկի կյանքը՝ նույնիսկ նրա խնդրանքով: Մահվան գործընթացը հոգևոր առումով շատ կարևոր է և չպետք է միջամտվի այն արագացնելու նպատակով:

ՎԱԹՈՒԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ՏԵՍԱԿԵՏՆ ԷՎԹԱՆԱԶԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վատիկանի Էկումենիկ երկրորդ ժողովում (1962-1965 թթ.) Կաթոլիկ եկեղեցին դատապարտել է կյանքի հանդեպ գործված ոճիրները, ինչպես օրինակ՝ ցանկացած տեսակի սպանությունը, ցեղասպանությունը, արհեստական վիժեցումը, էվթանագիան կամ կամավոր ինքնասպանությունը: Կյանքը սուրբ է և Աստծո պարգևը, որը մարդ կոչված է պահպանելու և պտղաբեր դարձնելու: Կյանք իլելը հակառակ է աստվածային սիրո գաղափարին և մերժում է Աստծո

ծրագրին համապատասխան ապրելու անձի պատասխանատվության դրույթը:

Դավանաբանության կոնգրեգացիայի 1980 թ. հռչակագիրը միանշանակ հայտարարել է. «Անհրաժեշտ է ողջ հաստատակամությամբ ասել, որ ոչ ոք չի կարող թույլ տալ անմեղ մարդու սպանություն՝ լինի այն սաղմ կամ պտուղ, երեխա կամ հասուն մարդ, անբուժելի կամ մահացող մարդ: Բացի դրանից, ոչ ոք չի կարող պահանջել կատարել այդպիսի սպանություն թե՛ իր, թե՛ որևէ մեկ այլ անձի նկատմամբ»²¹:

«Թեթև մահ» եզրն օգտագործվել է Դավանաբանության կոնգրեգացիայի 1980թ. մայիսի 5-ին ընդունած «Հռչակագիր էվթանազիայի մասին» փաստաթղթում, որտեղ ձևակերպվել է էվթանազիայի սահմանումը. «Էվթանազիա ասելով հասկացվում է ցանկացած գործողություն կամ անգործություն, որն իր էությանը կամ դիտավորությանը հանգեցնում է մահվան: Այսինքն՝ իր ուղղակի նշանակությամբ էվթանազիան բժշկի օգնությամբ կանխամտածված սպանությունն է»²²:

Այս ձևակերպման մեջ հստակ երևում է Կաթոլիկ եկեղեցու դիրքորոշումը. այն որակվում է որպես սպանություն:

Կաթոլիկ եկեղեցու վերջին շրջանի ամենահայտնի փաստաթղթերից մեկը Հովհաննես Պողոս Բ պապի *Evangelium vitae* («Կյանքի Ավետարան») կոնդակն է, որը հենվում է Սուրբ Գրքի, քրիստոնեական ավանդության և բնական օրենքի վրա՝ պաշտպանելու համար այն հայտարարությունը, որ էվթանազիան Աստծո հաստա-

²¹ Տե՛ս Դավթյան Ս. Հ., Բիոէթիկա, Երևան, 2009, էջ 121:

²² Տե՛ս Сгречча Элио, Тамбоне Виктор, Биоэтика, Москва, 2002, էջ 355:

տած օրենքից հեռացում է, բարոյապես հավասարագոր ինքնասպանությանը կամ սպանությանը²³:

Շրջաբերական այս ուղերձը վերահաստատում է մարդու կյանքի արժեքը և անձեռնմխելիությունը և միաժամանակ Աստծո անունով ուղղված է ամեն մի անհատի՝ հարգե՛ք, սիրե՛ք, պահպանե՛ք կյանքը: Միայն այս արժեքները հիմք ունենալով՝ մարդը կգտնի արդարություն, խաղաղություն, ճշմարիտ ազատություն և երջանկություն²⁴ :

ՌՈՒՍ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՏԵՍԱԿԵՏՆ ԷՎԹԱՆԱԶԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Էվթանազիայի վերաբերյալ Ռուս ուղղափառ եկեղեցու առաջին պաշտոնական փաստաթուղթը «Էվթանազիայի օրինականացման ժամանակակից միտումներ» կոչված փաստաթուղթն է (1999 թ.), ուր ասվում է. «Ճանաչելով յուրաքանչյուր մարդու կյանքի արժեքը, նրա ազատությունը և արժանապատվությունը որպես եզակի արարածի՝ ստեղծված Աստծո պատկերով և նմանությամբ, ուղղափառ հոգևորականությունը, գիտնականները, բժիշկները կարծում են, որ անընդունելի է անհույս հիվանդ մարդկանց սպանելու մտադրությամբ Էվթանազիայի օրինականացման ցանկացած փորձ՝ այն համարելով սպանության մի ուրույն ձև:

²³ Վազգենյան դպրանոց, հոգևոր-մշակութային պարբերական, 2008, # 2, (Գևորգ Աբդ. Սարոյան, Էվթանազիա և բժշկական էթիկա, էջ 28:

²⁴ <http://www.vatikan.va./holy-father/john-paul/encyclicals/documents/hf-jp-ii-enc-:>

Ռուս ուղղափառ եկեղեցու Եկեղեցական խորհուրդը դեմ է էվթանագիայի ցանկացած ձևի, քանի որ դրա ընդունումը տանում է նաև բժշկության քրեականացմանը և առողջապահական համակարգի նկատմամբ անվստահությանը»²⁵:

²⁵ <http://www.wco.ru/biblio/books/evtan1/Main.htm>. mos:

ՀԱՎԵԼՎԱԾ Բ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է Ազգային ժողովի կողմից
04 մարտի 1996 թ.

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Սույն օրենքը սահմանում է մարդու առողջության պահպանման սահմանադրական իրավունքի իրականացումն ապահովող բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման, իրավական, տնտեսական և ֆինանսական հիմունքները:

Գ Լ ՈՒ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Հիմնական հասկացություններ

1. Բժշկական օգնություն և սպասարկում՝ բնակչությանը կանխարգելիչ բուժական, դեղորայքային օգնության ցուցաբերում, ախտորոշիչ հետազոտությունների, վերականգնողական բուժման, բժշկական փորձաքննության անցկացում, հարբժշկական և ոչ բուժական բնույթի այլ ծառայությունների մատուցում:

2. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված, բնակչությանը բժշկական օգնության և սպասարկման որոշակի տեսակներ ցուցաբերող ֆիզիկական և իրավաբանական անձ, անհատ ձեռներեց կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություն՝ անկախ կազմակերպական-իրավական տեսակից և սեփականության ձևից:

3. Առողջապահական պետական նպատակային ծրագրեր՝ ամենամյա ծրագրեր, որոնք ուղղված են բնակչության առողջության պահպանմանը և որոնց ֆինանսավորումն

արտահայտված է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում:

Առողջապահության պետական նպատակային ամենամյա ծրագիրը պետական բյուջեի նախագծի կազմում Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացնում է Ազգային ժողով: Պետությունը բյուջետային նպատակային ֆինանսավորման միջոցով ապահովում է առողջապահության բնագավառի պահպանումը և զարգացումը, որի ծավալները որոշվում են առողջապահության պետական նպատակային ծրագրերին համապատասխան:

4. Արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում՝ քաղաքացիների կողմից առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում ստացված բժշկական ծառայությունների, դեղերի և (կամ) բժշկական պարագաների դիմաց մասնակի փոխհատուցում պետական բյուջեի միջոցների հաշվին:

(1-ին հոդվածը խմբ. **21.03.00** ՀՕ-43, փոփ. **23.10.02** ՀՕ-435-Ն, լրաց. **25.10.10** ՀՕ-155-Ն)

Հոդված 2. Բժշկական օգնության և սպասարկման հիմնական տեսակները Բժշկական օգնության և սպասարկման հիմնական տեսակներն են՝

ա) առաջնային բժշկական օգնությունը՝ որպես յուրաքանչյուր մարդու համար անվճար, առավել մատչելի մեթոդների և տեխնոլոգիաների վրա հիմնված բժշկական օգնության և սպասարկման տեսակ, որը երաշխավորվում է պետության կողմից.

բ) մասնագիտացված բժշկական օգնությունը՝ որպես ախտորոշման և բժշկական առանձնահատուկ մեթոդների ու բարդ բժշկական տեխնոլոգիաների վրա հիմնված բժշկական օգնության և սպասարկման տեսակ: Բժշկական օգնության և սպասարկման տեսակների ցանկը և կառուցվածքը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 3. Բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման ձևերը Բժշկական օգնությունը և սպասարկումը կազմակերպվում են՝

հիվանդանոցային ձևով, երբ անհրաժեշտ է բժշկական միջոցառումների համալիր կիրառում՝ ախտորոշում, բուժում, տևական հսկողություն և հատուկ խնամք.

արտահիվանդանոցային ձևով, երբ դրա իրականացման համար չեն պահանջվում հիվանդանոցային պայմաններ:

Գ Լ ՈՒ Խ 2

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հոդված 4. Բժշկական օգնություն և սպասարկում ստանալու մարդու իրավունքը Յուրաքանչյուր ոք, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, տարիքից, առողջական վիճակից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, Հայաստանի Հանրապետությունում ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալ անվճար կամ արտոնյալ պայմաններով՝ պետության կողմից երաշխավորված առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի այդ ծրագրերի շրջանակներից դուրս բժշկական օգնություն և սպասարկում ստանալ բժշկական ապահովագրական հատուցումների, անձնական վճարումների, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ աղբյուրների հաշվին:

Այլ պետություններում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների բժշկական օգնությունը և սպասարկումը իրականացվում է տվյալ պետության օրենսդրության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի համաձայն:

(4-րդ հոդվածը լրաց. 25.10.10 ՀՕ-155-Ն)

Հոդված 5. Մարդու իրավունքները բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս Բժշկական օգնության դիմելիս, ինչպես նաև բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս յուրաքանչյուր ոք իրավունք ունի՝

ա) ընտրել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողին.

բ) ստանալ բժշկական օգնություն և սպասարկում՝ հիգիենայի պահանջներին համապատասխանող

պայմաններում.

զ) պահանջել բժշկի օգնությանը դիմելու փաստի, իր առողջական վիճակի, հետազոտման, ախտորոշման և բուժման ընթացքում պարզված տեղեկությունների գաղտնիության ապահովում, բացի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերից.

դ) իրազեկ լինել իր հիվանդության մասին և համաձայնություն տալ բժշկական միջամտության համար.

ե) հրաժարվել բժշկական միջամտությունից, բացի սույն օրենքով նախատեսված դեպքերից.

զ) արժանանալ հարգալից վերաբերմունքի՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից:

Հոդված 6. Բժշկական օգնության և սպասարկման ընթացքում հասցված վնասի փոխհատուցում ստանալու մարդու իրավունքը

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման և իրականացման ընթացքում իր առողջությանը հասցված վնասի դիմաց ստանալ փոխհատուցում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 7. Առողջական վիճակի մասին տեղեկություն ստանալու մարդու իրավունքը

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի մատչելի ձևով ստանալ տեղեկություն իր առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին: Մարդու առողջական վիճակի մասին տեղեկությունը նրա կամքին հակառակ չի կարող հաղորդվել նրան կամ այլ անձանց, բացի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերից:

18 տարին չլրացած կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված հիվանդների առողջական վիճակի մասին տեղեկությունները տրվում են նրանց օրինական ներկայացուցիչներին:

Հոդված 8. Համաձայնություն բժշկական միջամտության համար

Մարդու համաձայնությունը բժշկական միջամտության համար անհրաժեշտ պայման է, բացի սույն օրենքով նախատեսված

դեպքերից: Բուժողի կամ բուժվողի պահանջով համաձայնությունը կարող է լինել նաև գրավոր:

18 տարին չլրացած կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված հիվանդին, ինչպես նաև այն դեպքերում, երբ հիվանդի վիճակը թույլ չի տալիս արտահայտել իր կամքը, բժշկական միջամտության համար համաձայնությունը տրվում է նրա օրինական ներկայացուցչի կողմից:

Օրինական ներկայացուցչի բացակայության դեպքում, եթե բժշկական միջամտությունը հետաձգման ենթակա չէ, բժշկական միջամտության վերաբերյալ որոշումը, ելնելով հիվանդի շահերից, կայացվում է բժշկական խորհրդակցության (կոնսիլիումի), իսկ դրա անհնարինության դեպքում՝ բժշկի կողմից:

Հոդված 9. Մարդու վերարտադրողական իրավունքը

Յուրաքանչյուր գույզ կամ յուրաքանչյուր ոք իրավունք ունի՝

ա) որոշել իր երեխաների թիվը և նրանց ծնվելու ժամկետները.

բ) անցանկալի հղիությունից և հղիության արհեստական ընդհատումից խուսափելու նպատակով օգտվել ընտանիքի պլանավորման արդյունավետ և անվնաս միջոցներից ու մեթոդներից, դրանց վերաբերյալ ստանալ անհրաժեշտ տեղեկություններ:

գ) հղիության ընթացքում ստանալ հղիության և ծննդաբերության հետ կապված բժշկական օգնություն և

սպասարկում՝ պետության կողմից երաշխավորված ամենամյա առողջապահական նպատակային ծրագրերի շրջանակներում:

Հղիության արհեստական ընդհատումը և բժշկական ամլացումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Յուրաքանչյուր ոք, ներառյալ դեռահասը, իրավունք ունի տեղեկություններ ստանալ իր սեռական առողջության պահպանման հարցերի, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների, դրանց բարդությունների և հետևանքների մասին:

(9-րդ հոդվածը լրաց. 06.11.00 ՀՕ-110)

Հոդված 10. Բժշկական օգնություն և սպասարկում ստանալու երեխայի իրավունքը

Յուրաքանչյուր երեխա առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում իրավունք ունի ստանալ

անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում:

(10-րդ հոդվածը լրաց. 25.10.10 ՀՕ-155-Ն)

Հոդված 11. Շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությամբ տառապող մարդու իրավունքը

Շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությամբ տառապող մարդն իրավունք ունի անվճար ստանալ պետության կողմից երաշխավորված կարգով բժշկական օգնություն և սպասարկում և բուժվել այդ նպատակի համար նախատեսված հատուկ մասնագիտացված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում:

Շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 12. Ձերբակալված, կալանավորված և ազատազրկման վայրերում պատիժ կրող անձանց բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքները

Ձերբակալված, կալանավորված և ազատազրկման վայրերում պատիժ կրող անձինք իրավունք ունեն ստանալ բժշկական օգնություն և սպասարկում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 13. Զինձառայողների և զորակոչիկների բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը

Զինձառայողները և զորակոչիկներն իրավունք ունեն ստանալ բժշկական օգնություն և սպասարկում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 14. Արտակարգ իրավիճակներում տուժած մարդկանց բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքները

Արտակարգ իրավիճակներում տուժած մարդիկ բժշկական օգնություն և սպասարկում են ստանում անվճար՝ պետության կողմից երաշխավորված կարգով:

Հոդված 15. Օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքները

Հայաստանի Հանրապետությունում գտնվող օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք իրավունք ունեն ստանալ բժշկական օգնություն և սպասարկում Հայաստանի Հանրապետության

օրենսդրության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի համաձայն:

Հոդված 16. Բժշկական օգնության և սպասարկման իրականացումը առանց մարդու համաձայնության

Առանց մարդու կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության թույլատրվում է իրականացնել բժշկական օգնություն և սպասարկում մարդու կյանքին սպառնացող վտանգի, ինչպես նաև շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 17. Բժշկական միջամտությունից հրաժարվելը

Յուրաքանչյուր ոք կամ նրա օրինական ներկայացուցիչն իրավունք ունի հրաժարվել բժշկական միջամտությունից կամ պահանջել ընդհատել այն, բացի սույն օրենքի 16 հոդվածով նախատեսված դեպքերից:

Բժշկական միջամտությունից հրաժարվելու փաստը՝ հնարավոր հետևանքների նշումով, գրանցվում է բժշկական փաստաթղթերում և հավաստվում հիվանդի կամ նրա օրինական ներկայացուցչի կողմից:

Գ Լ ՈՒ Խ 3

ԲՇԾԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ

ԻՐԱՎՈՒՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 18. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները և նրանց իրավունքները

Հայաստանի Հանրապետությունում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողներն իրավունք ունեն ցուցաբերել համապատասխան բժշկական օգնություն և սպասարկում ընտրված տեսակների շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզիա ստանալու դեպքում:

Բժշկական գործունեությամբ զբաղվելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետությունում համապատասխան կրթություն, մասնագիտացում ստացած, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բժշկական գործունեության որոշակի տեսակներով զբաղվելու լիցենզիա ստացած անձինք:

Այլ պետություններում բժշկական կրթություն ստացած անձանց թույլատրվում է Հայաստանի Հանրապետությունում իրականացնել բժշկական գործունեություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի համաձայն:

Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունեն՝

ա) միավորվել մասնագիտական միություններում և դրանց միջոցով մասնակցել առողջապահական

պետական նպատակային և ապահովագրական ծրագրերի մշակմանը, բժշկական գործունեության

լիցենզավորմանը, իրենց իրավունքների պաշտպանությանը և միության կանոնադրությամբ նախատեսված այլ խնդիրների իրականացմանը.

բ) պաշտպանել իրենց մասնագիտական պատիվը և արժանապատվությունը.

գ) ապահովագրել իրենց մասնագիտական գործունեությունը:

Հոդված **19**. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների պարտականությունները և պատասխանատվությունը

Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները պարտավոր են՝

ա) յուրաքանչյուր մարդու ցուցաբերել անհետաձգելի, առաջին բժշկական օգնություն՝ անկախ այդ օգնության դիմաց վարձատրությունը երաշխավորող հիմքերի և այլ հանգամանքների առկայությունից.

բ) ապահովել ցուցաբերվող բժշկական օգնության և սպասարկման քանակական ու որակական բնութագրիչների համապատասխանությունը սահմանված չափանիշներին.

գ) յուրաքանչյուրին տեղյակ պահել նրան տրամադրվելիք բժշկական օգնության և սպասարկման տվյալ տեսակի, մեթոդների, ծավալների, տրամադրման կարգի և պայմանների մասին.

դ) յուրաքանչյուր մարդու կամ բժշկական օգնության համար այլ վճարողների պահանջով տրամադրել անհրաժեշտ տվյալներ հիվանդին ցուցաբերած բժշկական օգնության և սպասարկման

քանակական ու որակական բնութագրիչների և այդ նպատակով կատարված ծախսերի մասին.

ե) ապահովել մարդու բժշկի օգնությանը դիմելու փաստի, նրա առողջական վիճակի մասին հետազոտման, ախտորոշման և բուժման ընթացքում պարզված տեղեկությունների գաղտնիությունը, բացի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերից.

զ) ներկայացնել վիճակագրական և այլ տեղեկություններ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

է) հոգատար և հարգալից վերաբերմունք ցուցաբերել հիվանդների նկատմամբ:

Իրենց մեղքով մարդու առողջությանը հասցրած վնասի համար, ինչպես նաև մարդու առողջական վիճակի մասին տեղեկություններ հայտնելու դեպքում, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները, սպորինի բժշկական գործունեությամբ զբաղվող անձինք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գ Լ ՈՒ Խ 4

ԲՇՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱԿԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

ՁԵՎԵՐԸ

Հոդված 20. Գործունեության առանձնակի տեսակներով զբաղվող մարդկանց պարտադիր բժշկական հետազոտումը

Առանձին մասնագիտությունների, ինչպես նաև առանձին ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների աշխատողները մարդկանց առողջության պահպանման, վարակիչ և մասնագիտական հիվանդությունների կանխարգելման նպատակով, նախքան նրանց աշխատանքի ընդունվելը և աշխատելու ընթացքում պարտավոր են պարբերաբար ենթարկվել բժշկական հետազոտման՝ Հայաստանի Հանրապետության

օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործատուները պարտավոր են հատուցել իրենց աշխատողների պարտադիր բժշկական հետազոտությունների անցկացման ծախսերը:

Հոդված **21.** Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելիս նոր դեղերի, մեթոդների, ձևերի, միջոցների կիրառումը և կենսաբժշկական հետազոտությունների անցկացումը

Հայաստանի Հանրապետությունում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելիս թույլատրվում է նոր դեղերի, մեթոդների, ձևերի, միջոցների կիրառում և կենսաբժշկական հետազոտությունների անցկացում՝

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

Մարդկանց բուժման նպատակով նոր դեղերի, մեթոդների, ձևերի, միջոցների կիրառումը, ցանկացած կենսաբժշկական հետազոտություն կարող է իրականացվել միայն նրանց իրազեկված գրավոր համաձայնության դեպքում:

Մարդը իրավունք ունի հրաժարվել հետազոտությանը մասնակցելուց դրա ցանկացած փուլում:

Հոդված **22.** Բժշկական փորձաքննությունը Մարդկանց առողջական վիճակի որոշման նպատակով հիվանդության, վնասվածքի, աշխատունակության կորստի և այլ դեպքերում կատարվում է բժշկական փորձաքննություն:

Բժշկական փորձաքննության ձևերն են՝

- ժամանակավոր անաշխատունակության,
- բժշկասոցիալական,
- ռազմաբժշկական,
- դատաբժշկական,
- ախտաբանաանատոմիական:

Ժամանակավոր անաշխատունակության փորձաքննությունը որոշում է մարդու աշխատանքից ժամանակավոր ազատման անհրաժեշտությունը և ժամկետները՝ պայմանավորված աշխատողի առողջական վիճակով, նրա ժամանակավոր կամ մշտապես այլ աշխատանքի փոխադրումը, ինչպես նաև մարդու բժշկասոցիալական փորձաքննության ուղեգրման հարցը:

Բժշկասոցիալական փորձաքննությունը որոշում է մարդու աշխատունակության կորստի աստիճանը, հաշմանդամության իուսմբը և պատճառը, սահմանում է նրա բժշկական, սոցիալական, աշխատանքային վերականգնման տեսակները, ծավալը և անցկացման ժամկետները, տալիս է երաշխավորություն աշխատանքի տեղավորման համար:

Ռազմաբժշկական փորձաքննությունը որոշում է զինվորական ծառայության անցնելու ենթակա քաղաքացիների, զինծառայողների, պահեստագործի զինծառայողների առողջական վիճակով պայմանավորված զինծառայության պիտանիությունը, հաստատում է զինծառայողների և զինծառայությունից արձակվածների հիվանդությունների, վնասվածքների պատճառահետևանքային կապը զինծառայության հետ, սահմանում է բժշկական, սոցիալական, աշխատանքային վերականգնման իրականացման տեսակները, ծավալը և ժամկետները:

Դատաբժշկական փորձաքննությունն իրականացվում է իրավասու մարմինների կողմից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

Բժշկական փորձաքննության իրականացման, վիճելի դեպքերում կրկնական, լրացուցիչ, ինչպես նաև անկախ բժշկական փորձաքննության անցկացման, բժշկական փորձաքննության եզրակացության դատական կարգով գանգատարկման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Ախտաբանաանատոմիական փորձաքննությունն իրականացվում է համապատասխան որակավորում ունեցող մասնագետի և այլ բժշկական մասնագետների մասնակցությամբ ախտաբանական հետազոտությունների արդյունքների և կլինիկական տվյալների համադրման և վերջնական ախտորոշման հաստատման նպատակով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգի:

(22-րդ հոդվածը փոփ. 11.10.00 ՀՕ-90, լրաց. 03.10.11 ՀՕ-258-Ն)

Հոդված 23. Էվթանազիայի արգելումը

Հայաստանի Հանրապետությունում արգելվում է Էվթանազիան՝ հիվանդի խնդրանքով նրա մահվան արագացումը որևէ գործողությամբ և միջոցներով:

Այն անձինք, ովքեր հիվանդին գիտակցաբար դրդում են Էվթանազիայի կամ իրականացնում են այն, կրում են պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 24. Ախտաբանաանատոմիական գործունեությունը

(Վերնագիրը խմբ. **03.10.11** ՀՕ-258-Ն)

1. Ախտաբանաանատոմիական գործունեությունը բժշկական օգնության և սպասարկման տեսակ է, որն իրականացվում է ախտաբանաանատոմիական հետազոտությունների, ախտաբանաանատոմիական հերձումների և ախտաբանաանատոմիական փորձաքննության միջոցով:

2. Ախտաբանաանատոմիական հետազոտությունները հիվանդությունների ախտորոշման նպատակով համապատասխան լիցենզիա ունեցող բժշկական հաստատություններում իրականացնում են որակավորում ունեցող մասնագետ-բժիշկները: Ախտաբանաանատոմիական հետազոտությունների ցանկը և անցկացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Ախտաբանաանատոմիական հերձումները մահացած անձի մահվան պատճառը որոշելու և նրա հիվանդության ախտորոշումը ճշգրտելու նպատակով համապատասխան լիցենզիա ունեցող բժշկական հաստատություններում իրականացնում են որակավորում ունեցող մասնագետ-բժիշկները:

Ախտաբանաանատոմիական հերձումը կարող է իրականացվել, եթե մահվան դեպքը օրենսդրությամբ սահմանված դատաբժշկական փորձաքննության առարկա չէ: Ախտաբանաանատոմիական հերձումների իրականացման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Ախտաբանաանատոմիական հերձումները կարող են չիրականացվել՝ հիմք ընդունելով մահացածի կյանքի օրոք հայտնած կամքը կամ նրա հարազատների կամ օրինական ներկայացուցչի գրավոր դիմումը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

5. Ախտաբանաանատոմիական հերձումները պարտադիր կարգով իրականացվում են՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած՝ շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների ցանկում ընդգրկված որևիցե հիվանդության հետևանքով անձի մահվան դեպքում.

2) վարակիչ հիվանդությունների կամ դրանց առկայության հիմնավորված կասկածի դեպքում.

3) նորագոյացություններից մահվան դեպքերում, երբ բացակայում է ախտորոշման հյուսվածքաբանական հաստատումը (վերիֆիկացիան)։

4) շուրջծննդյան (պերինատալ) մահացության դեպքում։

5) հղիների, ծննդականների և ծննդաբերների մահվան (մայրական մահացության) դեպքում։

6) այն դեպքում, երբ հիվանդը մահացել է բուժհաստատություն ընդունվելուց հետո՝ առաջին 24 ժամվա ընթացքում։

Պարտադիր կարգով իրականացվող ախտաբանաանատոմիական հերձումների անցկացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։

6. Մահվան կամ հիվանդության ախտորոշման վերաբերյալ ախտաբանաանատոմիական հետազոտության եզրակացությունը կցվում է մահացած անձի բժշկական փաստաթղթերին, իսկ դրա պահանջի դեպքում տրվում է նաև հարազատներին, օրինական ներկայացուցչին, ոստիկանությանը, դատախազությանը, ազգային անվտանգության ծառայությանը կամ դատարանին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած

կարգով։

(24-րդ հոդվածը խմբ. 03.10.11 ՀՕ-258-Ն)

Գ Լ ՈՒ Խ 5

ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 25. Բժշկական օգնության և սպասարկման իրականացման ֆինանսավորման աղբյուրները

Հայաստանի Հանրապետությունում բժշկական օգնության և սպասարկման իրականացման ֆինանսավորման աղբյուրներն են՝

ա) հատկացումները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից։

բ) ապահովագրական հատուցումները։

գ) մարդկանց անմիջական վճարումները։

դ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ։

Հայաստանի Հանրապետության կառավարությունը պետական բյուջեով նախատեսված հատկացումներով իրականացնում է առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում բժշկական օգնության և սպասարկման երաշխավորված ֆինանսավորում, բժշկական օգնություն և

սպասարկում իրականացնողներին՝ անկախ դրանց կազմակերպական-իրավական տեսակից և սեփականության ձևից:

Բժշկական օգնության և սպասարկման ֆինանսավորումն ապահովագրական հատուցումներով իրականացվում է կնքված ապահովագրական պայմանագրերի համաձայն:

Մարդկանց կողմից անմիջական վճարումներ կատարվում են, եթե մատուցվող բժշկական օգնության և սպասարկման տեսակների և ծավալների ֆինանսավորումն ամբողջությամբ կամ մասամբ չի իրականացվում սույն հոդվածի առաջին մասի «ա», «բ» և «դ» կետերում նշված աղբյուրներից:

Առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում պետական բյուջեի միջոցների հաշվին անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական ծառայությունների, դեղերի և (կամ) բժշկական պարագաների փոխհատուցման կարգը հաստատում է կառավարությունը:

(25-րդ հոդվածը լրաց. 25.10.10 ՀՕ-155-Ն)

Գ Լ ՈՒ Խ 6

ՕՐԵՆՔԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

Հոդված 26. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ
Լ. Տեր-Պետրոսյան

4 ապրիլի 1996 թվականի,
քաղ. Երևան
ՀՕ-42

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԼՈՐ ՄԵՂԱՆ
ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Էվթանագիա.

բարոյագիտական-աստվածաբանական
տեսանկյուն

(ք ն ն ա ր կ մ ա ն ն յ ու թ ե ր)

Ծրագրի ղեկավար՝ Տ. Վահրամ քահանա Մելիքյան

Օգնական՝ Ժորա սարկավազ Սարգսյան

Մարիամ Ավետիսյան

Խմբագիր՝ Հեղինե Մկրտչյան

Կազմը՝ Backbone Creative Studio



actalliance